ՊԱՏԻԺԸ

Այդ գյուղում ոչ մի դուռ իր շրջանակին այդպես կիպ չէր հագած: Կաղնե թանձր դուռը կաղնե շրջանակին հայրը տասը-տասներկու տարի առաջ ինչպես հմտորեն հագցրել էր՝ դուռն այդպես էլ կար: Բայց դռան ու շրջանակի միասնական եզրով ցուրտը փշրկուն եղյամ էր դրել և պինդ, ողորկ, գորշ սառույց էր կապել զույգ ծխնու վրա. քիչ հետո, երբ տղան ու հայրը դուրս գալու համար դուռը բացեին՝ զույգ ծխնու սառույցները զզվելի ճռռոցով փշրվելու էին:

Արմիկ Մնացականյան անունով տղան դռան տակ կանգնած սպասում էր հորը: Վառարանը դեռ կրակ ու կերակուր չէր բուրում, վախլուկ բոցերը վառարանի դռնից երբեմն ցոլք էին նետում, իսկ լուսամուտների ապակիները սառցակալած էին: Պղտոր, ծոխանքի, շան լափի գույն աղջամուղջում, վառարանի թույլ ցոլքերի դեմ հայրը մի ոտքը ծնկել ու գզրոցից մեխ էր ջոկում, տնտղում, եթե շատ ծուռ չէին՝ գցում էր կաշվե բաճկոնի գրպանը: Մայրը իրենց անկողինը հավաքում էր և ամեն անգամ նկատում, որ հայրը գրպանը մեխ գցեց: Մոր կարծիքով ափսոս էին և՛ մեխերը, և՛ գրպանը, և մայրն ամեն անգամ ուզում էր դիտողություն անել, թե մերկ մեխերը գրպանը կքրքրեն, բայց չէր անում: Պատերազմից առաջ, երբ տղայի ձեռքը դեռ չէր հասնում պահարանի գզրոցին, հայրն այնտեղ շիտակ շատ մեխ էր ունեցել, բայց հիմա դժվար էր գտնում և կարծում էր չի ունեցել, և Արմիկ Մնացականյան անունով պատանին ամաչում էր հիշել, որ ինքը երբևէ երեխա է եղել և փչացրել հոր մեխերը: Հիմա այդ մեխերը փտած փայտերի մեջ, գետնում և ուրիշ անհարկի տեղերում էին. որտեղ որ փափուկ էր ու մեխը հեշտ էր գնում՝ տղան պահում ու մուրճով խփում էր:

Վառարանի վրայինը կերակուր չէր, ծոխանք ու լափ էր: Շուն չունեին, շանը գայլերը խլեցին, լափը խոզի լափն էր, դեռ չէր տաքացել ու դուրս չէին տարել, նրա թթվահոտը տան աղջամուղջի հետ խառը կար: Արմիկ Մնացականյան անունով պատանու ձեռից գայլերը նրա շանը խլեցին: Պապոնց էգի քոթոթներից այդ շանն ինքն էր ընտրել, մնացած ավելորդներին, պապի հետ, ինքն էր թաղել, իր բաժին կաթի կիսով ինքն էր մեծացրել, որպես պապը թոռանը՝ ինքը

իրեն պատվիրել էր շանն այդ ձմեռ պաշտպանել գայլերից, եկող ձմեռ շունն արդեն ինքը կպաշտպանվի: Շունը դռնով դիպավ ու տագնապած կլանչեց, տղան անկողնից դուրս թռավ և գոմից դենն ու պառավ տանձենուց դեսը ձյուների մեջ շանը դեռ կենդանի տեսավ, նույնիսկ այնպիսի մի պահ եղավ, որ տղան ու շունը գայլերի մեջ միասին էին, բայց հետո արդեն ձյուների մեջ տղան մենակ էր, պառավ տանձենուց դենը ամայի սպիտակ լանջին կարծես թե երևաց սպիտակ շան բարձր ցատկը, գայլերի մեջ նրա սուր ծկլթոցը խեղդվեց, գայլերը հիմա խումբ չէին, հեռանում էին առանձին-առանձին, բայց շունը ետ չէր գալիս: Տղան զգույշ, եղածից զարմանալով ու սարսափելով, շանը կանչեց, բայց շունը չկար: Լուսնի տակ պսպղուն ձյուների մեջ կանգնած՝ տղան շանը նորից կանչեց, տղան նույնիսկ լսեց նրա փափուկ թափն ու հևքը, բայց դա պատրանք էր: Մեծ լուսնի տակ, մաքուր ձյուների մեջ տղան մի պուտ իսկ արյուն չգտավ, հենց օդում ցատկի մեջ պատառոտել ու լափել էին, և շփոթված տղան մի ամբողջ հավիտենություն, նրանց քստմնելի իրարանցումն ականջներում, կանգնած էր այնտեղ, ուր գայլերն ու շունն էին: Մի քիչ ուշ մայրն էր ելել և գոմի դռանը կանգնած էր: Տղան ետ-ետ նայելով եկավ, հետո մոր կողքին, գոմի դռանը կանգնած նայում էր սպիտակ, մաքուր լանջին: Նա չէր վախեցել՝ գայլերի մեջ եղել էր, պսպղուն սառնամանիքի մեջ նա հիմա մերկ ու բոբիկ էր, բայց մոր խոսքը գովեստ չէր. եթե տղան իրեն այդպես հիմարաբար չխփեր ոհմակ՝ շունն էլ չէր խփվի և կփրկվեր: Հետո արդեն, քնած երեխաների ու հանգած վառարանի տանը, մայրը տղային գովեց, բայց դա սուտ գովեստ էր, և մոր իսկական կարծիքը կշտամբանքն էր, որ մայրն այլևս չկրկնեց, բայց տղայի սրտին դա արդեն խարան էր:

Քույրն արթնացավ, անկողնում նստեց և, դեռ ոչինչ ու ոչ ոքի չտեսնելով, սկսեց պատմել, թե աղջնակի իր փոքրիկ երազում հայրիկը եկել էր, իրեն համբուրեց, բայց իր համար բան չէր բերել... և պատմելիս տեսավ հորն ու զարմացավ.

– Վա՜յ, դու երազում եկել էիր:

Հայրը վառարանի դեմ մեխ էր փնտրում, հոր մեջ ուրախություն չկար, բայց աղջնակի համար նա քնքշանքի նման մի բան գտավ:–

Երազում եկել էի,– ասաց հայրը,– երազում իսկականից էի եկել:

Այդ աղքատ, ցուրտ, գորշ, լափի հոտով ներծծված տանը դա դժվար քնքշանք էր, բայց աղջնակի ուրախության համար լիուլի բավական եղավ. այտիկները շողալով, աչքերը փայլուն՝ անկողնում նստած նա լուռ ժպտում էր, հետո ասաց.

– Երազում քեզ քանի տեսնեմ՝ էնքան կգա՞ս:

Վառարանի դեմ ծնկած՝ հայրը հիացմունքից սառավ:– Քանի տեսնես,– ասաց հայրը,– էնքան կգամ:

Մայրը իրենց անկողինը ծալք էր արել, ծալքի վրա ծածկոց էր գցում, մայրն ասաց.

– Քանի տեսնես՝ էնքան կգա, բայց դու քիչ տես:

– Ես ամեն գիշեր կտեսնեմ,– ասաց աղջնակը,– անընդհատ կտեսնեմ՝ որ չգնաս, աչքերս էսպես կփակեմ ու կտեսնեմ:

Աղջնակը վերմակով ուսերը ծածկեց, աչքերը խփեց ու օրորվեց:

– Կտեսնես,– ասաց մայրը,– կբերես, կբռնեն ու կդրկեն ուրիշի գործի: Ուրիշի գործին վախճան չկա:

– Էդ էլ կպատահի,– ասաց հայրը:– Մեխ չեմ գտնում:

– Մոխրի մեջ էդտեղ կա,– ասաց մայրը,– բայց պետք կգա՞ն:

– Մեխը մոխրի մեջ ի՞նչ է անում:

Դռան տակ իր անկյունում տղան սեղմվեց: Ամոթից քրտնելով, տղան կուչ եկավ ոչ միայն այն պատճառով՝ որ մեխերը ի վերջո ինքն էր վառարան գցել (չափարի փտած փայտերը մայրը վառարան էր գցել և հին, դեռ երեխա ժամանակ խփած մեխերը բացահայտվել էին), տղան շատ ավելի կուչ եկավ, որպեսզի քույրիկն իրեն չտեսնի. Արմիկ Մնացականյան անունով տղայի հագին վառարանի ցոլքերի դեմ բրդե տնագործ այն դեյրան էր, որ մայրը հագել էր աղջիկ ժամանակ, և մի երկու տարի հետո քույրն էր հագնելու. աղջնակը գիտեր, որ վառ կարմիր այդ դեյրան իր շորն է լինելու և երբեմն իր վրա չափում էր, երբեմն մեջն էր մտնում: Կարիքի ամբողջ գիտակցությամբ հանդերձ՝ տղայի համար դա վիրավորական շոր էր, բայց, երբ մայրը, համարյա թե զոռով, տղային խցկում էր այդ շորի մեջ, չէր կարելի բարձրաձայն բողոքել, որովհետև երեխաները՝ ախպերիկն ու աղջնակը, կարթնանային, և հիմա նույնպես չէր կարելի իր տեղը դռան տակ մատնել, քանի որ աղջնակը կրակի ցոլ-

քերի մեջ կտեսներ ապագայի իր կարմիր շորը և կվշտանար. բան չէր ասի, բայց վշտից կհիվանդանար:

Միակ բանը, որ տղան կարողացավ անել աղջկա այդ շորի դեմ, այն էր, որ պարանն ուսպանդ արեց, այսինքն՝ աջ ուսի վրայով ու ձախ թևի տակով փաթաթեց կրծքին և դռան տակ հորն սպասեց որպես բանակային շինելն ուսպանդ արած ռուս զինվոր:

Դռան նիգը հոր առջև տղան գիշերն ինքն էր իջեցրել, և ցուրտ դրսից հայրը ներս էր մտել հաճարենու թարմ թեփի բույրով, մի պահ կանգնել դռան մեջ սենյակի ընտանեկան ջերմության դեմ, ծանր, հոգնած ձեռքը շոյելու պես դրել տղայի գլխին, հետո, հոգնածությունից կարծես փլվում էր, համբուրել էր քնած երեխաներին, և աղջնակն ասել էր. «Ինձ համար ի՞նչ ես բերել»: Աղջնակի տեսածը երազ չէր, դա հենց այդպես էլ եղել էր, բայց թե գյուղի ղեկավարությունը երբ էր հասցրել հասկանալ, որ հայրը գյուղում է, այդ երբ էին հորը բանի դրել՝ դա նույնիսկ տղայի համար էր երազի նման: Ըստ երևույթին, պատահաբար տեսել էին գյուղամիջով գալիս և վռազ հիշել, որ ցուլերը սարում գոմի դուռը ջարդել են... բայց տղային թվում էր գյուղի ղեկավարները իրենց տան կածանին ամբողջ շաբաթը կանգնել սպասել են հոր գալուն, որպեսզի հայտնեն, թե դա թեկուզ նրա գործը չի և ծեծվածի պես նա հոգնած է, բայց ցուլը սարում գոմի դուռը ջարդել է:

Գուցե հորը խղճալուց, գուցե՝ որ ինքը կարողանում էր երկաթի չափ պինդ ճաղերը մեխել սահնակի պինդ դահուկներին, տղային թվում էր դուռը ինքը կնորոգեր, իսկ անասնապահներն ահա մտածում են, որ իրենք միայն անասնապահ են և մեխ խփող չեն:

– Գնացինք:– Հայրն շտապ, մեխը կարծես հենց այստեղ մի մոտիկ տեղ էր խփելու, ելավ, գզրոցը պահարանի խորշը խոթեց ու նորից ասաց.– Գնացինք, գնացինք:– Հայրը կռացավ, վերցրեց ու թևի տակ խփեց պարանի փաթեթը: Դուռը բացելիս հայրն ուսով քսվեց տղայի երեսին, նայեց, հիշեց, որ նա ճանապարհի իր ընկերն է, և խեղճ ու թերահավատ ժպտաց:

– Գնում ես՝ գնա,– ասաց մայրը,– որ գալիս ես՝ մեզ համար ինչ ես բերում որ:– Մայրը դա ասաց ակնհայտորեն աղջնակի անունից,

դա ուրեմն կատակ էր, բայց թեկուզ սիրով ու թեկուզ կատակ՝ թող չասեին: Հոր թեկուզ պարապ ներկայությունը տղայի համար մի մեծ, մի լիքը նվեր էր: Անհայր որդիների այդ գյուղում յոթ օրը մեկ հոգնություն ու փայտի թարմ հոտ բուրող հայրը տղայի սիրտը ափեափ լցնում էր երջանկությամբ ու երջանկությունը կորցնելու տագնապով:

Սառը, թարմ օդը խփեց նրանց դեմքին, և պարանը ռուս զինվորի նման ուսպանդ արած ու աղջկա կարմիր դեյրայով տղան սրսփաց ու հոր ետևից վազեց: Նա ուզում էր կարծել, որ ինքն ու հայրը արդեն տղամարդ ընկերներ են, բայց իր քայլը հոր քայլից փոքր էր, և ուզեր թե չուզեր՝ վազքով հորից երբեմն առաջ էր ընկնելու, երբեմն, բաց հպարտությամբ հորը նայելով, քայլելու էր համարյա թե ուս-ուսի, երբեմն էլ ետ էր ընկնելու և իր դեմ լինելու էր հոր լայն, նիհար թիկունքը: Իր հետ այդպես շունն էր հանդ գնում, երբ տղան լծվում ու սահնակով փայտի էր գնում:

Աղջնակը, քիթը ապակուն սեղմած, անկողնուց հավանորեն տեսավ ապագայի իր կարմիր շորը եղբոր հագին և անպայման մի քիչ վշտացավ... և տղան այդ շորով գուցե խոտ չշալակի, գուցե այդ շորը հանի, փաթաթի ու թևի տակ ետ բերի, և դա աղջնակի համար մխիթարություն կլինի, առայժմ, ոչինչ, մինչև երեկո թող ապրի ծիտիկի իր տխրությունը:

Հայրը դանդաղեց և ուսի վրայով կանչեց դեպի տուն.

– Ա՛յ ախչի...

Գոմից գալիս էր խոզի սուր ճղավոցը: Այծը, մոզին, կովը իրենց քաղցի ու տագնապների մասին ինչպե՞ս են իմացնում. քաղցած են, ծարավ թե հիվանդ՝ լուռ այդպես կան, իսկ խոզը նրանց խաղաղ գոյությունը առավոտ վաղ լցրել է իր անձանձիր, անընդհատ, այլանդակ ճղավոցով: Տնից պատասխանի չսպասելով՝ հայրն ասաց.– էն ճղղոցի մեջ էն կովը մեղք է, էն խոզի լափը տվեք, այ ախչի,– և մի տեսակ սայթաքելով՝ քայլն արագացրեց ու առաջ ընկավ: Տղայի դեմ հիմա նրա սեկե լայն թիկունքն էր, գոտի խրված կացնի կոթը և պարանի փաթեթը թևատակին:

Տան վերևից հոր այդ կանչը խոզի լափի մասին հենց այդպես էլ կա: Քամին թե սառնամանիքը հորը կարծես քշում էին, կռացած

գնալով հայրը կանչեց. «Ա՛յ ախչի... էն խոզի լափը տուր»: Տանիքից սպիտակ գոլորշի էր ելնում, վառարանն ուրեմն դեռ չէր բռնկվել... վառարանում տղայի բերած փայտն էր... տղան չոր փայտի աղմկոտ կրակը սիրում էր, տղան հատկապես սիրում էր փայտի կանաչ մորուքները... Հայրը խոզի մասին կանչեց, և վառարանի վրա խոզի լափն էր տաքանում... ուրեմն, խոզը երևանցի խաբեբան դեռ չէր առել և գնի վրա, ողորմության պես, կաշվե այն բաճկոնը դեռ չէր տվել, կաշվե բաճկոնը դեռ այդ տանը չէր, երևանցու հագին էր... բայց ուրեմն հոր հագին ի՞նչ էր: Հայրը, ոչ, այդ սառնամանիք ձյուների մեջ մերկ չէր, երբ ուսի վրայով ասաց «այ ախչի» և քամուց քշվածի նման արագացավ, հոր հագին որևէ շոր կար, հայրը մերկ չէր, բայց ի՞նչ շոր կար հոր հագին: Գուցե բանակային շինե՞լ: Սառած գետակն ի վար տասը կիլոմետր դեպի երկաթուղի՝ անտառտնտեսությունում հայրը փայտահատ և գերի ռումինների վրա տասնապետ էր, պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել. հոր հագին գուցե իրոք բանակային վերարկու լիներ, չեմ հիշում: Տղան, այո, ես եմ, բայց նրանից այնքան եմ հեռացել, որ նա այլևս իր համար առանձին գոյություն է:

Գերիների վրա հոր տասնապետությունը մայրը ծաղրում էր երբեմն խոր չարությամբ, երբեմն անչար ժպիտով էր ասում, թե նա տասնապետ է, երբեմն էլ թաքուն հույս էր փայփայում, թե ի ծնե աշխատավոր այդ մարդուն չնչին այդ իշխանությունը գուցե գայթակղի դեպի առհասարակ պաշտոնասիրություն... այսինքն՝ ձմռան նեղ կածանն ընկած չի գա իր դռանը միամիտ-միամիտ ընկնի բանդիր ղեկավարների բերանը, այլ որևէ կածանի կանգնած՝ շաբաթներով կսպասի միամիտ որևէ մշակի, որպեսզի տեղնուտեղը նրան սարը գոմի դուռը սարքելու ղրկի... Բայց հիմա ես գիտեմ, որ զուր էին այդ կնոջ չարությունն էլ, հույսն էլ. այդ մարդն ամաչում էր մի բաժակ ջուր ուզել ինձանից՝ իր որդուց. իր խղճի ձեռին այդ մարդը գերիների գերին էր և ոչ թե նրանց տասնապետը. երևանցի զվարթ խաբեբային այդ մարդը չկարողացավ ասել, թե ինքը խոզ չի ծախում. միակ այդ խոզը մինչև կանաչ քաղցած գարուն այդ ձմեռվա մեջ երեք երեխայի ուտելիքն է՝ միսը, ճարպը, կաշին, ոտքերը, գլուխը: Երևանցի ձեռնածուին նա չկարողացավ ասել, թե կաշվե այդ բաճ-

կոնը նախկինում գուցե նույնիսկ ղեկավար մարդիկ են հագել, անգամ գուցե կոմիսար է հագել, բայց հիմա հին է, շատ է հին, ուղղակի մոխրագույն է. ժպտուն առևտրականն ասաց՝ «խոզի ճարպ կքսես՝ կպսպղա»:

Դանելանց դռներին մեկը շարժվեց. մեկը նրանց արտաքնոցի կածանին կանգ առավ ու դեսը նայեց, և տղան աղջկա իր կարմիր շորը անցընրեց հոր կողքը: Մինչև ձորը, մինչև Դանելանց տների ծածկվելը տղան գնաց հորը ուսուսի: Ձորում, լայն, որձաքարե սալի պես պինդ սառույց կապած առվակն անցնելուց հետո, սպիտակ լանջն ի վեր կածանը նեղացավ, և տղան ստիպված էր հորն առաջ թողնել ու ինքը գնալ ետևից, բայց այլևս զգուշանալու բան չկար, քանի որ ամբողջ սպիտակ լանջին միայն իրենք էին: Դա սահնակի ճանապարհն էր. կայուն զույգ ակոսով, որ պինդ սառցակալած էին, տղան փայտ էր բերում, տղան մտածում էր, որ դա իր երկաթուղին է, տղան կարող էր անտառի ընդհուպ պռնկից թողնել բարձած սահնակը, և սահնակն անշեղ կգար, բայց տղան չէր թողնում, քանի որ, եթե ճամփին մարդ էլ չլիներ, թափ առած կգար սառույցին կխփվեր ու կթռչեր առվակի ձորը:

Հայրը սահնակի ուղին ավերում էր. նրա ծանր քայլերի տակ ակոսների տողանը փշրվում էր, վաղն այլևս սահնակն այնպես սահուն չէր փախչի, բայց ուղու երկու կողմից ծնկահար ձյուն էր, և տղան թաքուն գոհ էր, որ իր բացած ճանապարհն ահա այդպես տվել է հորը: Տղայի գործը վաղվա մեջ դժվարացնում էր, սահնակի ճանապարհից հայրը դուրս եկավ ու գնաց ձյուների միջով. սառած ձյունը ոտքի տեղով մեկ կոտրվում էր, և հոր ոտքերը խրվում էին մինչև ծնկները: Թեթև ու անկշիռ՝ իր ուղիով տղան գնաց ու առաջ ընկավ և քայլեց կրունկները խփելով սառցակալած ակոսներին՝ հե՛նց ջարդելով, հե՛նց կոտրելով, հորը հրավիրելով հե՛նց ջարդել, հե՛նց կոտրտել ակոսները: Հայրը գուցե ժպտաց, խեղճ սիրով գուցե «քուռակ» ասաց, գուցե դառնացավ ու հայհոյեց այս ցուրտ, քաղցած, դաժան աշխարհին... բայց քիչ հետո ենթարկվեց ու մտավ տղայի կածանը, և տղան այդ ժամանակ տրեխի թելը կապելու պատրվակով իրեն ետ պահեց ու գնաց հոր ետևից, քանի որ չէր

կարելի անընդհատ նրա աչքի առաջ լինել և ամոթանքի պես անընդհատ հիշեցնել, թե ես ահա տղա եմ, բայց ինձ աղջկա շոր եք հագցրել:

Չորի բերանում, կտրուկ զառիթափի տակ եղբայրը թակարդ էր լարել: Թակարդը նրա համար բացել էր ինքը՝ տղան, բայց դա եղբոր թակարդն էր, քանի որ նա էր ուզում հի՜նգ հարյուր ռուբլու գայլ բռնել: Եղբայրը հետք չուներ, նիհար ճուտի չափ նրա մարմինը տղայի ճանապարհին հետք չէր թողել, և թվում էր, թե դա աստծու թակարդն է, թակարդը երկնքից են դրել: Թակարդի շղթային ավելացրել էր իր կանաչ տրխաթելը, մի ուրիշ թել, ինչ-որ հին շորի եզրակար և ձյուների վրայով տարել հասցրել, կապել կաղնու գաճաճ թփին: Գայլն իբր տղայի կածանով գալու, ընկնելու էր թակարդը: Հայրը կացինը գոտուց դուրս քաշեց, ասաց. «Տանու կենդանի-մենդանի կընկնի մեջը», կոթը մոտեցրեց թակարդը տրաքացնելու, բայց ասաց. «Որտեղի՞ց է անասուն ընկնելու – սրբա՜ծ»:

– Դո՞ւ ես դրել,– ասաց հայրը:

– Ախպերիկը,– ասաց տղան,– ախպերիկը:

Թելի երեխայական կապերին նայելով՝ հայրը լաց լինելու պես ծիծաղեց: Չորը վերջացավ, դուրս եկան կտրուկ զառիթափի տակ: Վերելքն սկսելուց առաջ հայրը ետ՝ գյուղին նայեց, և տղան նույնպես նայեց – գյուղի վրա ոչ մի ձայն չկար և կարծես ծուխ էլ չկար, գյուղը կարծես մարած էր: Այս անգամ տղան տեսավ հոր կոկորդ խցված դառը գունդը: Ռազմաճակատից քառասունութ տղա ետ չէր եկել, քառասունութ հնձվոր, սայլվոր, եզնարած, ուսուցիչ, մաճկալ, փայտահատ, հյուսն՝ մի ամբողջ զնգուն համերգ: Հայրը զզվանքով այե արեց՝ այե՜ե, այսինքն թե չի հասկանում ինչ եղավ, ինչ պատահեց, այդ ինչ չար խորհուրդ էր:

– Խե՜ղճ,– ասաց հայրն ու թքեց,– մեզանից էլ խեղճ... բերանները կապած խեղճ անասուն են:

Դա գուցե սառած ամբողջ աշխարհի մասին էր, գուցե միայն գերիների, որոնք մեզ պես ու մեզնից էլ խեղճ էին, բայց ահա աշխարհը հանգցրել էին: Հայրը չպատմեց, հայրը չէր պատմում, ըստ երևույթին պատմելու բան չկար, քանի որ հայրը ռումիներեն չգիտեր, գերիները՝ հայերեն, և հայրն ու գերիները՝ ռուսերեն: Իսկ ինչը որ լուռ,

առանց լեզվի էր լինում՝ քստմնելի էր. գերիները ծմեռը զուտ կարտոլից սպիտակում էին, գարնանը կանաչում խոտ ուտելուց: Ռումինների ռուսերեն ռուկի վերխ և հոր գերմաներեն հենդի հոխ հրամանները վաղուց դարձել էին հիմարություն, և հիմա նրանք՝ հայրն ու ռումինները, սառած գետակն ի վար տասը կիլոմետրի վրա անտառում էին, փայտ էին կտրում, որպեսզի գարնան վարարումների հետ քշեն երկաթուղի, և նրանց արանքում ատելություն չկար, քանի որ նույնիսկ ատելու համար է ուժ հարկավոր: Բայց ավելի մեծ ուժ և՛ հորը, և՛ գերիներին, ծառ կտրելուց և խորանարդ առ խորանարդ, որպես գերության գերեզմանոց, դարսելուց և միմյանց ատելուց շատ ավելի մեծ ուժ մի ուրիշ բանի էր հարկավոր, և նրանք չունեին. հաճարենու դարավոր անտառը նրանք հատում էին այնտեղ, ուր Հովհաննես Թումանյանի տունն էր լինելու. իրենց գերության ու տգեղ գործի խորանարդները նրանք բարձրացնում էին հենց լուսավոր այն բացատում, որ փռվելու էր Հովհաննես Թումանյանի տան առաջ: Իրենց գերությունը նրանք բերել բնակեցրել էին հենց այդտեղ և ավերում էին Թումանյանի բարության ու սիրո աշխարհը և ուժ չունեին հասկանալու, որ տգեղ բանի են – նրանք հազիվ կային:

Ծմակի ընդհուպ պռնկից մինչև զառիթափի տակը անաղարտ ձյուն էր, մաքուր երկնքի տակ կապտին էր տալիս, և միայն սահնակի ուղին էր իջնում ծմակի ընդհուպ պռնկից մինչև զառիթափի տակը: Այդքան ուղիղ՝ քարտեզի վրա միայն Պետերբուրգ–Մոսկվա երկաթուղին է: Քարտեզի վրա ռուս ցարը քանոնը դրել ու գծել էր իր երկաթուղին, և ռուս ճորտերը ճահիճներում պառկել ու իրենց վրայով անցընել էին ցարի ուղիղ երկաթգիծը – տղայի ուղու կառավարիչն ու ճորտը միայն ինքը տղան էր եղել: Երկրորդ անգամ, երբ տղան ստիպված էր սահնակը թողնել ու ետ անտառ փախչել, սահնակը թափ էր առել ու նետվել աջ կողմի հեղեղատ: Հեղեղատը շատ խորը չէր, բայց գերեզմանափոսի պես միանգամից էր, և երբ փայտերը հատ-հատ դուրս էր գցել ու հիմա ուզում էր ինքը ելնել՝ հեղեղատը ետ էր քաշում, չէր թողնում, և այդ անգամ տղան գիշերով տուն հասավ: Շավարշ փոքր հորեղբոր մերունը գայլերն այդ փոսում էին կերել. շրջապատել, փոսն էին գցել ու փոսի նեղվածքում խեղդել, թե չէ՝ ազատության մեջ նրանք սև, երկարադունչ, համարյա

թե վայրենի այդ մերունի պոչն էլ չէին պոկի:

Հեղեղատի և ուղու արանքում, որտեղից երկրորդ անգամին սահնակը թռել էր, տղան ձյունի պատնեշ էր բարձրացրել, բայց այնքան էլ վստահ չէր, թե այդ պատնեշը, եթե սահնակն ու ինքը թափով բախվեին, կդիմանար, և այդ ոլորանում միշտ մի քիչ վախենում ու անցնելուց հետո թաքուն ժպտում էր:

Հայրը պատնեշը նկատեց: Նկատեց, պատնեշի գլխով նայեց հեղեղատի հատակին, երևի տեսավ փայտի չոր կեղևներն ու որդու ծնկների հետքերը և նորից այե արեց՝ այե՜ե...

– Այ տղա, փոսն ես ընկե՞լ,– անցած-գնացածի համար վախեցավ նա:

– Չեմ ընկել, թողեցի թռավ:

– Թե՞ ընկել ես:

Տղան ճիշտ չէր ասում, տղան ինքը չէր թողել, տղային թողնել էին տվել:

– Շա՞տ է չարչարում:

– Չարչարո՞ւմ,– զարմացավ տղան:– Բարձում եմ՝ ինքը գալիս է:

Հայրը սրտնեղեց.

– Այե՜ե... բարձում ես՝ ինքը գալիս է, ձի է:

Բառերը մեր մտքում հատուկ կերպարներ ունեն: Խնձորը, օրինակ, այն է, երբ տաքության մեջ խելքդ պղտորվել է, սիրուն հորաքույրը բերանը մրմունջով հպում է ճակատիդ և սառը, բուրող, իր այտի պես թառամած մի բան է դնում ձեռքդ, և երկու օր հետո ես տեսնելու, որ ծոցիդ մեջ խնձոր կա: Չարչարանքը տղայի մտքում մեծերի աշխատանքն էր. փոքրերի լուռ տառապանքն ու լուռ մնչոցները չարչարանք չէին:

– Աշխարհիբեկ հորեղբայրը շատ չարչարվեց,– ասաց տղան:– Մեղրատանձու բլրից գերանը բաց թողեց, մինչև ներքև գերանը թռավ եկավ, բայց ծերը լռվել էր, եզներով ինչքան քաշում էր՝ չէր քաշվում: Եզների լուծը ջարդվել էր, լծի տեղը հորեղբայրը մի լատան դրեց, բայց եզների ուսը ցավեցնում էր, եզները չէին քաշում, ետ-ետ էին անում: Ինքն էլ մրսում էր, ամբողջ օրը մատներին փչում ու եզների վրա ծղրտում էր: Որ հորեղբայրը լատան կտրեց՝ անտառապահը Քառանց բլուրին կանգնել ու նայում էր, նայում էր: Հորեղ-

բայրն ասաց. «Արի, արի... մոտեցար թե չէ՝ լծելու եմ»: Չմոտեցավ, կանգնել ու նայում էր, նայում էր:

– Գերանն ինչո՞ւ էր մեր դռնով տանում,– ասաց հայրը,– ինչո՞ւ չէր ներքևի հանգիստ ճամփով տանում:

Տղան ամաչեց, որ նրան մեծի հասուն պատասխան է տալու, բայց ուրիշ պատասխան չուներ:

– Չգիտեմ,– ասաց տղան,– Մեղրատանձու բլրից բաց թողեց ու մեր դռնով էր տանում: Շղթան հին էր, շուտ-շուտ տրաքում էր, լուծը կոտրել էր, եզները չէին քաշում: Ես եկա փայտի ետ գնացի՝ ձյուների մեջ ինքը դեռ չարչարվում էր:

– Պատերազմից առաջ էդ գերանը պիտի որ ես ու ինքը սարքած լինենք,– հիշեց հայրը:– Հնձի էինք գնում, մինչև տղերքը կհավաքվեին՝ կացինն իրար ձեռից խլելով սարքեցինք ու հանեցինք ճանապարհ: Տղերքը եկան տեսան՝ գերանին նստած սպասում ենք:– Հայրը հոգոց քաշեց:– Գլորել ու տարել է:

– Մայրիկն ու երեխեքը կարծում էին նախագահը կարգադրել է՝ մեր դուռն է բերում, մայրիկը թաքուն շփոթվել էր՝ թե նրա առաջ որտեղից է հաց դնելու... դեռ եզներին էլ խոտ էինք տալու... բայց մեր դռնով անցընել տարել էր:

– Ոչինչ,– ասաց հայրը,– տարել՝ տարել է, չարչարվել՝ չարչարվել է: Հիմա էնքան կա՞ն, որ հողի տակ են ու չեն չարչարվում, էնքան կա՞ն, որ կուզենային լինել ու չարչարվել:

– Հետո գնացի տեսա,– ասաց տղան և ամաչեց. ամբողջ աշխարհի տառապանքի մեջ ինքը իր փոքր գնալ-տեսնելն է նկատում.– ներքևի հանգիստ ճանապարհով՝ ջրի կապը սառել ու ուռել էր, գերանը եզների հետ ձորը կընկներ, պինդ սառույց է, ծիտը կանգնի՝ կսայթաքի, մեկ էլ...

– Մեկ էլ ի՞նչ:

– Գերանը մեծ էր, մինչև Մեղրատանձու բլուրը եզները դժվար կեռմաններով էին քաշել, էդքան տեղը թող գլորվեր, եզներն էդքան տեղը թող չքաշեին:

– Դե լավ,– ասաց հայրը,– գերան է, տարել՝ տարել է:

– Ես գերանի մասին չեմ մտածում. եզները շատ չարչարվեցին:

– Դո՞ւ,– ասաց հայրը,– դու չես չարչարվո՞ւմ:

– Ես սահնակը վերցրի եկա: Հետո որ ետ գնացի՝ մեր Հրայրը ձյուների մեջ կանգնել ու եզների հետ տնքում էր, հորեղբոր ծղրտոց-ների հետ կուչ էր գալիս: Ձյուների մեջ մինչև գիշեր էդպես կանգնած էր, մայրիկը կանչում էր՝ չէր լսում:

– Էլի օգնություն է,– ասաց հայրը:– Դասերդ ո՞նց են գնում:

– Դասե՞րը: Մի երկու լինգ էր պետք ու մի երկու տղամարդ, որ լինգը տակը տային ու գերանը լնգեին: Հորեղբայրը խրել էր, տնքում ու ուսի վրայով նայում էր՝ թաղում մարդ չկար, միայն Քա-ռանց բլուրին անտառապահն էր:

Հայրը հեգնեց.

– Բա Թոզի բիձեն ի՞նչ էր:

– Թոզի բիձոնց կովը աղբյուրի ձորն էր ընկել, ինչքան կին կար ճվճվում, անիծում ու թոկերով քաշում էին՝ ցեխից դուրս չէր գալիս:

– Էդ ե՞րբ:

– Որ ես փոքր էի,– ասաց տղան:

Հայրը ժպտաց.

– Հիմա մեծ ես:

Տղան հիմա էլ փոքր էր, բայց այն ժամանակ բոլորովին փոքր էր: Լապտերի դեղին, հիվանդոտ, չեղած լույսով՝ կանայք ծղրտում, տնքում ու անիծում էին հավասարապես Հիտլերին ու Թոզի բիձուն: Առվակն ի վար ցեխ էր, կովին ներս էր քաշում, առվակն ի վեր՝ կտրուկ զառիթափ, և կանայք պարանները գցել ու կովին դեպի լանջն էին քաշում, ձյունախառն հողը նրանց ոտքի տակ փախչում էր, և կանայք ծղրտում ու անիծում էին Հիտլերին, կովին, Թոզի բիձուն՝ թե ինչու չի կարողացել մի դույլ ջուրն ինքը տանել – հղի, նիհար կովը բերել ձորն է գցել: Հետո գյուղամիջից եկան լապտերը հանգցնել ու ձայները կտրել տվին, գյուղի վրա ինքնաթիռի հռնդոց էր պտտվում, և լուռ կանայք կովի վրա կարպետ գցեցին և, կովը ցեխի մեջ խրված, սպասեցին: Ասում էին. «Հիտլե՜ր, թոփը փորումդ տրաքի», հետո ասում էին. «Իիի, Թոզի բիձա, մի ջոկ թոփ էլ քու փորումը տրաքի» և անզորությունից ծիծաղում էին: Լապտերը մոր ձեռքին էր: Մայրը չէր ուզում ենթարկվել և պատրույգը մի քիչ իջեցրեց: Նրա վրա շշուկով գոռացին, և մայրը լապտերը հանգցրեց ու անեծք ծղրտաց, բայց նրան ասացին՝ ձե՛նդ, և լրիվ խավար էր ու

խավարի մեջ ինքնաթիռի հռինդի տակ՝ կովի հնազանդ տնքոցը:

– Էն որ ետ ու վեր գնացած մեծ պոզեր ունի,– ասաց տղան,– որ մոխրագույն ու հանգիստ է, էդ եզը մեր հորթն է եղե՞լ:

Հայրը դանդաղեց, մտածեց ու ասաց.

– Ինչո՞ւ ես հարցնում:

– Որ հորեղբայրը լծել ու չարչարվում էր՝ մեկը նա էր: Նա քաշում էր, ուժեղ էր, սեղմում մյուսին գերանի տակն էր կոխում:

– Դու մի տարեկան ես եղել՝ նրան տարել են,– ասաց հայրը,– դու նրան որտեղի՞ց ես ճանաչում:

– Մեր կովի նման է,– ասաց տղան:– Մայրիկն ասում է մեր հորթերից է:

– Մեր կովի մեծ ախպերն է,– ասաց հայրը:– Չեռ քաշիր,– բարկացավ հայրը,– ոչ մի բան էլ մերը չի, ձեռ քաշիր:

– Մի բան էլ հարցնեմ ու... Անտառապահը Քառանց բլուրին կանգնել նայում էր, բայց չէր մոտենում, կանգնել նայում էր: Հորեղբայրն ասաց. «Մոտենաս թե չէ՝ լծելու եմ»: Իրավունք չունե՞նք անտառից չոր գերան տանենք:

– Չոր գերա՞ն, չոր փե՞տ: Իսկ որ,– ասաց հայրը,– ասում ես լծի փոխարեն լատան կտրեց, հետո որ ասում ես գերանը լնգում էր՝ լատանն ու լինգն է՞լ չոր էին:

Դուրս եկան զառիվերի գլուխը. տղայի առանձին ուղին այդտեղ խառնվում էր սարի մեծ ճանապարհին: Գետինն այդտեղ միշտ բաց էր լինում. սահնակն անցընելու համար տղան երեկ էր ձյուն լցրել, բայց դարձյալ բաց էր. դեղին, փշրկուն ավազահողը հալել ու ներծծել էր ձյունը. այդ հաճարենու տակ միշտ, երբ նույնիսկ ծառերի կեղևը սառնամանիքից տրաքում էր, մի քիչ ջերմություն կար՝ օրորոցի մանկան շնչի չափ, և տղան սահնակն անցընելուց հետո այդտեղ կանգ էր առնում ու ժպտում: Սահնակն այդտեղից տղան այսպես էր անցընում. վերևում կենտ բոխու մոտ տղան սահնակը կանգնեցնում էր, գալիս գրկում ու ձյուն էր լցնում մերկ գետնին, գրկում ու նորից էր ձյուն բերում, ոտքերով տափակում ու նորից էր բերում, հետո գնում կանգնում էր կենտ բոխու տակ, սահնակի ետևը, ձեռքերի մեջ թքում ու սահնակով նշան էր բռնում այնտեղից այստեղ.– Դեպի Գերմանիա՝ առաա՜աջ,– և թափով բերում անցընում

էր սահնակը: Սահնակը նա կանգնեցնում էր զառիթափի ուղիղ գլխին և ետ գալիս, կանգնում հաճարենու տակ ու ժպտում թվացյալ կամ իրական ջերմության մեջ:

– Չարչարվում ես:– Հայրը ոտքով մի ձնակտոր շպրտեց դեպի մերկ գետինը:– Չեմ խփվել ու իբր թե եկել եմ, բայց քեզ չարչարում եմ:– Հայրը ոտքը տակը տվեց ու ձյուն շպրտեց դեպի բաց գետինը:

– Չի պահում,– ասաց տղան,– հալվում է:

– Ետ գնա,– բարկացավ հայրը,– քեզ չարչարում եմ, գնա տուն:

Տղան առաջ ընկավ:

– Այգու չափարը վառեցեք, մինչև...– ասաց հայրը:– Էլ փետի չգաս:

– Անտառը էստեղ՝ ամոթ չի՞ չափարը վառենք:

– Ամոթը քեզ չարչարելն է, չափարը վառելն ամոթ չի:

Բայց տղան նրան ինչպե՞ս ասեր, որ չարչարանք, այո, թեկուզ մի քիչ կար, բայց շաբաթը մեկ նրա կենդանի ծանր գոյությամբ այդ ամբողջը սրբվում էր, տղային դրսից ու ներսից գոլ ջրով ասես լողացնում էին, և տաք վառարանի սենյակում տղան անընդհատ զգում էր հոր ապահով ներկայությունը, գիրք էր կարդում, չէր հասկանում և անընդհատ զգում էր, որ նոր տանն է, մտածում էր Հովհաննես Թումանյանի մասին և զգում, որ նա ներկայությամբ է մտածում, երկուշաբթի առավոտյան նրա անկողնին նայում էր թաքուն հույսով, և միշտ ծանր տագնապով էր նկատում անկողնի պարապը: Շան պես՝ նրա հոտը տղան ճանաչում էր: Փայտը տղան նրա համար էր կրում – մի կենտ կիրակիի համար: Իսկ ի՞նչ անեին Հայկը, Հովիկը, Նորիկը, Ժորիկը, որոնց հայրը ոչ շաբաթը մեկ էր գալիս, ոչ էլ երբևէ գալու էր, Լավրիկն ու Յուրիկը, Ալբերտը, Ալֆոնը, Գիլբերտը... Անտեր, անհեր, անտղամարդ տների միջով հայրն ամոթով է անցնում, երևի այդ պատճառով է գիշերները գալիս:

– Ռուսաստան,– ասաց հայրը,– կարծեմ դահուկը մոմում ու մոմած դահուկով են գնում: Տակերը մոմ են քսում:

Հայրը կրունկով խփեց սառույցի կոշտին՝ չկոտրեց, և նորից խփեց, ապա կացինը դուրս քաշեց և բնքով փշրեց ու բերանով տաշեց սառույցի այդ թումբը, որ սահնակը միշտ թափ էր տալիս ու հազիվ չէր շպրտում ճանապարհից: Տղան ինքը կացնի բերանով

երբեք չէր փշրի սառույցը, որպեսզի հոր կացնի բերանը սառույցի մեջ հանկարծ քարի չառնի, չնայած տղան կարողանում էր, արդեն կարողանում էր կացինը սրել:

– Ուրեմն կարելի է սահնակն էլ մոմել,– ասաց հայրը,– մոմած հեշտ կլինի:

– Դժվար չի,– ասաց տղան,– քո ռանդայով տակերը ռանդել եմ, մոմածի նման են, որ փախչում է՝ հազիվ եմ պահում: Մեկ էլ,– ասաց տղան,– մոմ չկա: Ամբողջ մեղրամոմը՝ մերն էլ, իրենցն էլ՝ տատը մոմ է սարքել, տարել մատուռում վառել: Պապը աստծուց վախեցավ՝ մոմի համար չխոսեց, բայց մայրիկը չվախեցավ:– Տղան ժպտաց:– Մայրիկը ճվճվում էր, բայց տատը մենակ աղոթում ու աստծուն ասում էր. «Տեր աստված, խսխոսան է, բայց սիրտը մաքուր է, բարկանալ մի... էս է տղես կգա,– տատն էր ասում,– մոմ էլ կսարքի, մեղր էլ կսարքի, հաց էլ կսարքի... փեթակի պե՞ս կաշխատի տղես»:

Հայրը տխուր ժպտաց.

– Էս է եկել եմ:

– Էս է եկել եմ,– կրկնեց հայրը:– Եկել եմ, կամ, բայց ոչ ձեզ համար կամ, ոչ իմ ախպոր անտերների, ոչ էլ իմ հորումոր... Ո՞նց են ապրում,– հարցրեց հայրը,– ապրում ե՞ն:

Տղան պատմեց.

– Որ հեռվից նայում ես՝ չափարին կարծես ձեռ տված չի, բայց մանր ճյուղերը բոլորը պոկել վառել են... կեղևները, խնձորենիների չոր ճյուղերը, խոտի կոշտ կրճոնը, կարտոլի աշնան ցողունները... թույլ կրակ է լինում,– ասաց տղան,– պապի ծնկները երևի հազիվ են տաքանում: Պապը մրսկան է:

– Արյունը դանդաղել է:– Ծեր հոր ու պառավ մոր մասին հայրը հետո, կարծես, էլ չէր մտածում, բայց երբ խոսեց, տղան տեսավ, որ նրանց պառավ տունը հոր համար առանձին մեծ հոգս է:– Ես ի՞նչ անեմ,– ասաց հայրը,– օրենք կա, օրենքով, եթե ծնողները մեծ են ու նրանց խնամող է հարկավոր... նրանց փետը, ջուրը... նրանց կրակը, հացը... նրանց թուլությունը, հիվանդությունը... իրավունք չկա, որ նրանց խնամողը բանակ գնա, իմ փոքր ախպերը օրենքով հիմա բանակում չէր լինելու... բայց իմ հերնումերը ամաչեցին: Ամաչեցին, որ ուրիշներն ահա զույգ-զույգ տղա են կորցրել – սևուսուգի էս

ավերակ գյուղում իրենք ահա բախտավոր են: Հեռացրին,– ասաց հայրը,– իմ փոքր ախպորը գյուղի աչքի առաջից հեռացրին, իմ հերնումները վախեցան իրենց մեծ բախտից:

Տղան տատին միշտ խնդրում էր իրեն աղոթք սովորեցնել, և տատը չլսելու էր տալիս: Տղան, այնուամենայնիվ, հավատում էր, թե տատի մրմունջներից դենը մի ուրիշ աշխարհ կա՝ որ ինքը չի տեսնում, քանի որ այդ աշխարհի դուռը բացելու կախարդական աղոթքը չգիտի, և պապն ամեն անգամ թույլ, իրենց կրակի չափ հազիվ կայծկլտալով, ժպտում ու ասում էր՝ դպրոցականին իրավունք չի աղոթք գիտենալ: Երբ ինքը հիվանդ էր, և մեղմ հորաքույրը խնձոր էր բերել, ու տատը եկել էր աղոթելու, աչքերը փակ՝ տղան ականջ պահեց տատի մրմունջներին. դրանք արևի, գառների, կանչերի, մրգերի, գույների մասին հիշողություններ էին կամ տատն ապագայի մեջ էր տեսնում այդ զնգուն կանչերն ու մեղվանոցի թանձր բույրը, և միայն վերջում, ամենավերջում տատը խոստանում էր իր որդու և տղայի հոր ձեռքով ինչ-որ դուռ կապել՝ մատուռի ջարդված դուռը, ամեն. «Սիմոնիս կասեմ կսարքի»: Ս-ս-ս, լսում էր տղան: Բայց այդ մասին հիմա տղան հորը բան չասաց, թե չէ դուրս էր գալիս, որ սարի ձմեռանոցներից մինչև գյուղի ներքևի ծայրը հայրը բոլորին պարտք է: Տղան հարցրեց.

– Գերիներին ե՞րբ եք թողնելու գնան իրենց տները:

– Ե՞ս,– ասաց հայրը,– ե՞ս եմ թողնելու: Երբ որ Մոսկվան կարգադրի:

– Թե՞ չեք թողնելու... որովհետև գերի են:

– Չգիտեմ,– ասաց հայրը:– Երբ որ Մոսկվան կարգադրի:

– Թումանյանի անտառը կտրում են,– ասաց տղան:– Մոսկվան գիտի՞, որ Թումանյանի անտառը կտրում են:

– Մոսկվան ամեն ինչ էլ գիտի,– ասաց հայրը,– բայց Թումանյանինը չի, Թումանյանը մեռել է:

– Հովհաննես Թումանյանը հազար ինը հարյուր քսաներեք թվականին մեռել է, գիտեմ,– ասաց տղան,– էդ չեմ ասում:

– Լսում եմ,– ասաց հայրը:

– Իսկ կարո՞ղ է պատահել,– ասաց տղան,– որ մեր գերիներն էլ

Գերմանիայում են, բայց չեն թողնում գան իրենց տները:

Հայրը չպատասխանեց: Հայրը լռում էր, և տղան կարծեց հայրն իրեն չի հասկացել:

– Ռումիններն էստեղ գերի են, չէ՞,– սկսեց տղան,– մեր գյուղացիներն էլ էնտեղ նրանց անտառներում...

– Չգիտեմ,– ասաց հայրը,– չեմ հասկանում: Տեղյակ չեմ, չգիտեմ: Չգիտեմ,– սրտնեղեց հայրը,– չարչարվում ու ասում էինք շատ ենք չարչարվում, բայց ամեն մեկը իր գործի վրա էր չարչարվում... էս ի՞նչ է: Ետ գնա տուն,– ասաց հայրը,– տուն գնա:

Հեռավոր երկրաշարժի նման՝ քամին հռնդում էր ձմռան գորշ անտառում, բայց ծառերը չէին ճոճվում, կամ նրանց ճոճքը չէր երևում: Անտառի գլխով՝ բաց, սպիտակ, կապտած սարերն էին: Գագաթների ծյունը թույլ, մեռնող ծիրանի էր տալիս, իսկ լանջերը սառցակապույտ էին: Անտառը նույնքան մեռյալ էր, ինչքան լեռների հզոր անկենդանությունը, բայց սարերի կարծր լռության տակ անտառը ջերմ ու բարի արարած էր թվում: Անհավատալի էր, որ անտառից վերև, լեռների մեռյալ սահմաններից դենը ահա մարդկային կենդանի օջախ կա, խոտի ապահով դեզ, տաք, ծանր, դղրդուն ցուլերը դուռ են կոտրել, կանայք աղջկա պես վախենում են, լուր են ուղարկում և այլն... և ավելի քան անհավատալի էր, չնայած այդ խոտը տղան ինքն էր փոցխել ու մոր հետ դիզել, թե այդ սարերը երբևէ կանաչ են եղել, բարակ, թեթև, սիրելի գերանդին զնգացել է ազատ խոտհարքներում, և ծյուների տակ հիմա նուրբ ծաղկաբույր խոտ կա: Բայց այս մի եզակի անգամ հայրը միայն տղայինն էր, նրա երկար տասներկու տարիների մեջ այս ճանապարհին հայրը միայն տղայինն էր, և տղան ոչ մի կերպ չէր հրաժարվի նրա կողքերից ու ետևից շան նման վազվզելուց:

Ձմեռանոց գոմի մոտ, սարի մյուս երեսին կոլխոզի մեծ դեզը և սարի այս երեսին Կապույտ աղբյուրից ներքև տղայենց խոտի բլուրը աշնանը նույն օրն էին դրվել: Եղաններն ու պարանները ուսներին՝ կանայք տղայենց դռանը դանդաղեցին ու սպասեցին մորը: Մայրը մի վայրկյանում հիվանդացավ, պառավեց, հին կոճղին նստեց ու ասաց, թե ինքը նրանց ջորին չի: Չափարի գլխով Իսկուհի

մորքուրը եղանը մեկնեց խնձորենու վրա միակ խնձորին ու ասաց. «Հողեմ բախտավոր գլուխդ, բա մե՞նք ենք քու ջորին»: Հետո ճանապարհին նրանք փեշներն ու տոպրակները վայրի թթու խնձոր էին լցնում, և սարսափելի էր զգալ նրանց ծարավը խոտի բեռան տակ: Մայրն ասաց. «Էլ ինչո՞վ եմ մարդատեր, որ անտերներիդ նման խոտ եմ շալակելու»: Այդ ժամանակ Քառանց բլուրին հառնեց ընկեր Ուցյունի կերպարանքը, և մայրը կանանց ասաց. «Հողեմ ձեր մատնիչ գլուխը»: Օրիորդ Ուցյունը դպրոցի վարիչն ու մաթեմատիկայի ուսուցիչն էր, բայց ղեկավար և ուսուցիչ էր կարծես ամբողջ գյուղի վրա: Նախագահը կանանց հետ կռվելուց վախենում էր, կանանց կառավարումը հանձնել էր օրիորդ Ուցյունին: Պարաններն ու եղանները ուսներին՝ հնազանդ աշակերտների պես կանայք ճամփա ընկան:

Թամար մորքուրը իր կարտոլն ու ջիլ պանիրը դրել էր տղայի մոր տոպրակում և նրան իրենից հեռացնում էր, ինքը նրանից հեռու էր կենում, ասում էր. «Աչքիս մի՛ երևա՝ որ հացս չուզեմ»: Կանայք ծիծաղում էին՝ «Թամարի հացը»: Կանայք տղայի մորն ասացին. «Չէիր գալիս, չէիր գալիս, վերջը երեխայիդ էլ բերեցիր»: Մայրը նրանց խաբեց. «Իմ զավակը չի ուզում իր մերը ջորի լինի – ինձ հետ հավասար եզան պես պիտի լծվի»: Կանայք ասացին. «Հողեմ բախտավոր գլուխդ»: Շրթունքները չոր ու ճաքճքած՝ նրանք տակնիվեր նայեցին վայրի խնձորուն, և տղան բարկացավ ու շղահարեց, կանայք ճվճվալով տակից փախան, տղան ծառը բեռնաթափեց, գետնի վրա մի խնձորի չափ պարապ տեղ չկար, բայց տղան մինչև կիջներ շալվարի քանդված կարը բռնելով՝ ծառի տակ մի խնձոր չկար – ավլա՛ծ:

Կապույտ աղբյուրից ներքև հոր հնձած խոտհարքում կանայք, կատակ ու շիտակ, արտասուքոտ ժպիտով անիծեցին կռների ուժը այն հնձվորի, որ այդտեղ եղել էր, հնձել էր, հիմա այդտեղ չէր, բայց կանայք նրան այնպես էին զգում, որ կարծես նա այդտեղ էր: «Իիի,– անիծեցին կանայք,– կայծակը թիկունքիդ տա. էս ո՞վ է, ախչի, էս սրտախորովը»: Այսինքն թե՝ նրա թիկունքին խփելու համար իրենց ձեռքը թույլ կլիներ: Մոր շրթունքները անձայն շարժվում էին, մայրը թաքուն ժպտում էր, նա չգիտեր զսպի՞ իրեն ու նրանց անեծքին

չպատասխանի, թե՞ գոհանա, որ ամուսինը համարյա թե իրենը չի, բայց կա, անտառի ու գյուղի գլխով՝ տասը կիլոմետր ներքևներում է, գերիների մեջ... փախած, թաքուն՝ մի երկու ժամով եղել է այստեղ:

Աղբյուրի ձորակում տղան ետ մնաց. մոլորվեց, իրեն ետ պահեց ու ձորակից դուրս չեկավ, մինչև կանանց ձայները չմարեցին: Ներքևում, անտառին չհասած, Մնացականյան իր պապերի հին գոմերն էին, որ հետո կոլխոզը վերցրել էր, բայց հիմա լքված էին. հնձող ձեռք չկար, ոչխարը ձմեռելու էին քշում Քռի հովիտները: Հին գոմերից ներքև, համարյա թե անտառում, քարուտ լանջին տղայի Ավետիք պապի խոտհարքն էր, ձորի անտառների վրայով ճրագթաթ անտառուտ լեռան Մեծ բացատում՝ Հարություն պապի հին գոմերն ու հին խոտհարքը: Բոլորը, բոլորն ամայի ու լքված էին, ոչ մի տեղ գերանդի չէր շարժվել: Միայն այստեղ՝ Կապույտ աղբյուրի տակ, բաց լանջին մի երկու ժամով եղել էր տղայի հայրը:

Թե լանջի այդ խոտհարքը հայրը երբ էր հնձել՝ տղան չէր տեսել: Հայրը երևի տուն էր եկել գիշերով, մի որպե գուցե թե կանգնել քնած երեխաների գլխավերևը, կոշտ մազոտ նրա կզակը խավարի մեջ երևի թե գտել էր տղայի նիհար այտը, հետո հապշտապ, ինքը իրեն զոռով պոկելու պես, դուրս էր եկել ու բարձրացել սարերը: Իր գերիներին էր դարձել գիշերով, որովհետև շատ մեծ անամոթություն կլիներ լույս արևի մեջ լայնաթիկունք ու առողջ կանգնել որբ այդ գյուղում՝ թե ես ահա կամ և ինձ համար գերանդի եմ քաշում:

Այն առավոտ տղայից առաջ աղջնակն էր զգացել, որ հայրիկը եկել է, և մայրը ժպտացել ու շոյելով խաբել էր, թե նրա երազում է եկել, բայց մի օր հետո, երբ խոտն արդեն չորացած կլիներ, մայրն ստիպված էր տղային ասել, թե սարում իրենք հավաքելու խոտ ունեն:

Զուտ հնձածից՝ ուղղակի տաշված գետնից տղան առնում էր հոր խաղաղ ուժի ներկայությունը: Դա մի գիշերվա ու մի մարդու գործ չէր, բայց մայրը, երբ տղան ու նա վերադառնում էին, լաց եղավ ու ասաց, որ զուտ մենակ ու մի գիշեր է հնձել: Խոտհարքի ներքևներում, խոտի տակ պահած, տղան գերանդին ու հեսանը գտավ: Գերանդու կաղնե բռնակը հոր ափի մեջ հղկվել, դարձել էր կաշվի չափ ողորկ: Գերանդին մաշված՝ հազիվ մի մատ լայնության էր,

հեսանը մաշված՝ մատիտի չափ բարակ էր – գերանդին ու հեսանը հոր բռան մեջ ամբողջ գիշեր իրար կերել էին: Ձնգուն, վարար, սառը Կապույտ աղբյուրը հեռու չէր, բայց որպեսզի ամեն անգամ աղբյուր չհասնի, հայրը խոտհարքի ճլկուտ մեջտեղը քանդել գուռ էր արել և ամեն անգամ ցամաքած վրա էր ընկել ու ծծել, մինչև տակը ցամաքեցրել այդ գոլ, պղտոր հեղուկը:

Միայն փոցխով ու բաց ձեռքերով տղան ինչքան կարող էր խոտը ի մի բերեց, ինչքան հնարավոր էր կիտեց, բայց բլուր կապելու համար եղան էր պետք, եղանով՝ մայրը վերադարձին գալու էր: Տղան հետո տեսավ ու նկատեց պապի փայտե երկմատնանի եղանը և ամաչեց, որ չի հասկացել գնալ, իր համար անտառից եղան կտրել: Հոր հեսանը գոտու տակ և հոր գերանդին ձեռքերում՝ տղան խոտը հավաքելուց հետո մի քանի անգամ փորձեց հնձել, բայց գերանդին խոտի վրայով փախչում էր, տղան երբեմն կարողանում էր մի երկու բուռ խոտ պոկել, բայց հոր մաքուր աշխատանքի կողքին դա անշնորհք կրծմրծոց էր... տղան այդտեղից հեռացավ, հոր խոտհարքից հեռու փորձեց՝ չկարողացավ գոնե մի փոքրիկ բացատ անել խիտ, ջղուտ, մի տեսակ յուղոտ ու սայթաքուն խոտի մեջ:

Մայրը չէր գալիս: Տղան Կապույտ աղբյուրի մոտով ելավ լեռան գլուխը – մյուս երեսի ամբողջ լեռնահովտով մեկ խոտի բլուրներ էին շարժվում, կարմրատանիք գոմի մոտ կիսատ դեզ էր, մրջյունի չափ փոքր մի երկու հոգի դեզի վրա էին, մի տեղ միայն խոտը եզներով էին քաշում, բայց հեռավորությունից էր թե ինչ՝ եզների քաշանը կանանց շալակներից մեծ չէր երևում: Արձակ մի մրջնանոց, մի մե՜ծ հովիտ, որի հատակներում լուռ տնքում, լուռ անիծում, լուռ լարվում էին կանայք: Այս կողմի ծորից՝ գյուղից լուռ անտառների վրայով դպրոցական զանգի մի ծվեն եկավ, իսկ այն կողմը՝ հովտի լուռ հատակներում, կանայք, պարաններով բեռներին կապված, որպեսզի իրենց բեռներից չփախչեն ու բեռներն էլ իրենցից չփախչեն, մի քիչ էլ մոտեցան դեզին, և նրանց տառապանքի հետ այդպես նույն պահի մեջ՝ դպրոցը, եղունգների մաքրությունը, կարմիր թանաքը, քերականությունը, թվաբանության խորամանկ խնդիրները և անհոգ ոտանավորները մի անխիղճ, մի մեծ հիմարություն էր:

Գիշերը, վերադարձին, մայրը լուռ զատվեց կանանց լուռ խմբից,

եկավ, տղան առանց եղանի համարյա թե կարողացել էր դարսել ու ոտքել խոտի բլուրը, ինքն ու մայրը միասին վերջացրին ու լուռ վերադարձան:

Դժվար էր պատկերացնել, թե անճկուն, անկարող, ճվճվան նրանց աշխատանքն ահա մեռյալ լեռներում հիմա մի կենդանի օջախ է պահում՝ մի տաք ձմեռանոց, ուր տաք, ծանր, դղրդուն ցուլերը խփում դուռ են փշրում, և կթվորուհիները նայում են չգիտես վախով թե հիացումով:

Տղամարդու թե կնոջ ծղրտոց եկավ, տղան սրվեց՝ և դատարկ գլորվող, ուղղակի փախչող սայլի գռգռյուն եկավ: Ծղրտոցը կրկնվեց, եզան վրա էին բարկանում, և ծղրտոցը հուսահատ չէր, նույնիսկ չար չէր, սուտ ծղրտոց էր, սայլով կարծես խաղ էին անում: Հայրը հեգնեց.

– Բա ասում եք տղամարդ չկա... զնգոցը ծմակն է գցել:

Մատղաշ խիտ հաճարկուտի միջով զառիվերի գլխին երևաց փախստական շարժումը, հետո կտրուկ դարձ տվին մարդն ու սայլը և մատղաշ խիտ հաճարկուտի նեղուցով կախվեցին դեպի հայրն ու տղան: Սայլվորը եզների առջևից փախած գալիս էր, սայլն ասես նրան հալածում էր, նրա գլխարկի ականջները թափահարվում էին, տղան կարծես թե տեսավ սայլվորի ծաղրածուորեն վախեցած աչքերը. վախենում էր, երևի, հանկարծ սայթաքի ու սայլի տակ ընկնի, ճիպոտը ձեռքին փախչում ու փախչելով սպառնում էր եզանը՝ Ծիրա՜ն...

Ամառվա տաք արևի մեջ կանաչ արոտներում եզներից մեկը գուցե թե լցվում, ծիրանագունում էր, բայց հիմա երկուսն էլ գորշ, գզգզված բրդոտ էին, վիթխարի փորները կողքեկողք նետելով՝ չէին կարողանում կոտրել իրենց թափը:

– Կամաց, այտա, տակով ես անում,– ծաղրեց հայրը:

Սայլվորը տվեց անցավ հորուորդու միջով, հայրը կանգնեց սայլի ճանապարհին ու կռնչաց: Ասես դահուկների վրա՝ եզները չռվեցին ու կանգ առան: Տղան հետո կարող էր ասել, որ սայլի ճանապարհը հոր հետ ինքը կտրե՛ց:

Քիչ ներքևում սայլվորը կանգ էր առել, մեղավոր ժպտում էր, իրեն՝ տղամարդուն ասես բռնել էին տղայական խաղի մեջ: Ասաց.

– Էդ անտերները բոբիկ են, պճեղները չի բռնում:

– Դո՞ւ,– ասաց հայրը,– դու պայտած ես՝ բոբիկ չե՞ս:

Սայլվորը ճիպոտի ծայրով ետ հրեց բանակային ականջավոր գլխարկը և ուրախ բարևեց.

– Բարի լույս:

Եզներից մեկը խռպում էր, խզզում, խեղդվում ու դարձյալ խռպում էր. սամիներից մեկը չկար, լծած էր մի սամիով ու սամոտենով. սամոտենի ծայրը գունդկապ էին գցել, լծի ծակով անցըրել ու կարճ՝ հագցրել մյուս սամուն. այդ նեղվածքը եզանը խեղդում էր:

Սայլվորը դատարկ թևքը բանակային վերարկուի գրպանը դրեց, ճիպոտի ծայրով ետ հրեց ականջակալ խավոտ գլխարկը, և այտերը աղջկորեն կարմիր ու փափուկ նրա դեմքին մի անիմաստ ու մեղավոր հրճվանք շողաց: Կարմիր այդ ուրախությունը գուցե սայլի առաջ այդպես երեխայորեն փախած գալուց էր, գուցե իր համար այդպես մշտապես կար, բայց հոր թուխ, ջղուտ, մազը կոշտ և ձայնը կարծես նույնպես ջղուտ ներկայությամբ նա կնոջ տպավորություն էր անում:

– Մեզ անտեր թողել,– ասաց նա,– գնացել քաղաքի համար ծառ ես կտրում:

Դա կնոջ խոսք ու լրիվ անձնատրություն էր. նրա փոխարեն տղան վատ զգաց և ուսի վրայով մի վայրկյան թաքուն նայեց նրան – նա այնուամենայնիվ տղամարդ էր, դեմքի մազը նոսր էր, բայց կար, բանակային վերարկուի թևքը դատարկ էր, ուրեմն եղել էր ռազմաճակատում. հետո տղան հայացքը սահեցրեց հոր վրայով – խառը ժպիտից ու քամահրանքից հոր դեմքը անդուրեկան ծամածռվում էր:

– Այտա, տո մեծ մարդ,– և հոր ձայնը զնգաց,– մի դուռն ի՞նչ է, որ մի դռան համար ինձ քաշ եք տալիս սարը:

Դեռ ժպտալով՝ սայլվորն ասաց.

– Էդ խի՞ ես նեղանում:

Կարծես մի հարվածով մեխ խրեր՝ հայրն ասաց.

– Բա ի՛նչ անեմ, որ չնեղանամ:

Ուրախությունն անցնելու հետ սայլվորի դեմքը դանդաղ փոքրացավ, բերանը կլորացավ, կծկվեց ու տեղավորվեց զուտ քթի տակ,

վիրավորված երեխայի պես՝ նա հիմա կարող էր միայն լաց լինել, բայց խոսեց.

– Եկել է խեղճ կնանոնց վրա նեղանում է: Տղամարդ չկա, տնաշեն, տղամա՜րդ:

Հայրն այդ ժամանակ նայում էր եզներին, և նրա խոսքը թարս խփելու պես եղավ.

– Էդ՝ դու էլ ե՞ս կնիկ:

Տղան հայացքը կախեց:

– Դե որ միթևանի եմ,– եկավ սայլվորի հուսահատ բողոքը,– կնիկ եմ ու կնկանից մի բան էլ պակաս եմ, իմ ի՞նչն է տղամարդ:

Դատարկ թևքի համար հայրը նրան չխղճաց.

– Թե չէ Նոյի ժամանակ սար էիք շուռ տալիս:– Բայց կարելի՞ էր այդպես տրորել մարդու խեղճ ներկայի հետ նաև անցյալը:– Ժռաճուտի պե՜ս բերանները բաց կերի են սպասում: Մի պարապ մեխ խփելու համար էլ է երկու ձեռ պետք, այտա, կնանիք են:

Հայրը ճանապարհից դուրս եկավ, տղան կարծեց իրենք արդեն սայլին ճանապարհ են տալիս, տղան ուզեց ասել խեղդվող եզան ու սամոտենի մասին, բայց հայրն արդեն կացինը գոտուց դուրս էր քաշել: Հայրն այդ ե՞րբ էր նկատել խեղճ ու դաժան այդ լծվածքը և խիտ թավուտի մեջ աչքադրել բոխու միակ մատղաշը: Շեղակի թեթև մի հարվածով (և նույնիսկ թխկոց չելավ, և տղան ամաչեց իր ապիկար թխկթխկոցների համար), կարճ մի խշրտոցով, ուր երևացին նրա և՛ ուժը, և՛ հիանալի կարողությունը, հայրը հատեց մատղաշ բոխին, և բոխին իր բնի կողքին կանգնած մնաց... մի հարվածով այնպես ու այնտեղից հատեց, որ սամու այդ ծայրն արդեն պատրաստ էր, իսկ թե մյուս ծայրը երբ սարքեց՝ տղան չհասցրեց տեսնել. կացինը դանակի պես բռնած՝ հայրը, սամու մանրիկ ոստերը հատելով, ձյուների միջից դուրս եկավ: Եկավ, ոտքերը թափ տվեց, կացինը գոտու արանքը խրեց և սրտնեղելով արդեն անհասցե, մոտն ասես մեղավոր ու առհասարակ մարդ չկար, ծամածռվեց ու առանց նայելու զուտ մատներով քանդեց մյուս սամու ծայրին սամոտենի մեռյալ հանգույցը, որը պիտի եզանը թեկուզ խեղդեր, բայց այդ միթևանի անկարողի մոտ մինչև գյուղ չպիտի արձակվեր: Եզան բկի տակ տղան տեսավ հոր ուժեղ բութը և բութի կարծր եղունգը, իսկ իր

եղունգները տղան կրծելով էր պոկոտում: Նոր սամին հիմա իր տեղում էր, եզը լծված էր կիպ ու ազատ, և հայրը շոյում էր եզան աչքերը: Սայլվորի երեխայական քենն անցել էր, հորը նա հիմա նայում էր դարձյալ անձնատուր բաց հրճվանքով... Բայց կարելի՞ է իր գործը այդպես հանձնել ուրիշի և քեզ վիրավորելու իրավունք տալ նրան... չէ՞ր կարելի, թեկուզ միթևանի, ատամներով բացել դանակի բերանը և սամի տաշել և սամոտենը կապել, պի՛նդ կապել, մի ձեռքով ու ատամներով:

– Ո՞ւմ աղջիկն ես,– ասաց սայլվորը:

Մոր աղջկական և քրոջ ապագա շորի միջից՝ տղան նրան նայեց սուր թշնամանքով:

– Էս նիհար երեխային էդ ուր ես էն սառնամանիք սարը հանում,– ասաց սայլվորը:

– Հետդ ետ տար,– ասաց հայրը,– սելի հետ գնա, Արմիկ:– Հայրը սայլին ճանապարհ տվեց և ծանր ափը դրեց եզան մեջքին:– Գնա դասերիդ:

– Ես էլ,– ասաց սայլվորը,– տանում եմ եզները պայտել տամ, համ էլ աղ է տարվելու, քարաղ եմ տանելու տավարի համար:

– Բարի ճամփա:– Երեսն արդեն դեպի սարն ու արդեն գնալով՝ հայրն ասաց.– Գնա, Արմիկ, գնա, մի՛ արի, ցուրտ է լինելու:

– Արի, այ տղա... արի սելով տուն տանեմ,– կանչեց միթևանին,– կարմիր շոր են հագցրել՝ ասացի աղջիկ ես:

Երբ քո եղունգը ջարդվել է, և ատամներդ չեն բռնում, ու կացնի բերանը չի տաշում, և այս մեծ աշխարհի ամբողջ անհարմարության մեջ քո թրջված ու երեկոյան խաղաղ սառնամանիքով փայտացած փողքերից ավելի քեզ լացեցնելու չափ խանգարում է ջարդված այդ եղունգը, դու դանակդ դուրս ես քաշում և պատրաստ ես եղունգի այդ փշուրի հետ կտրել-նետել այդ անտանելի մատը: Դանակը չի բացվում, քո փայտացած մատները պտղունց չեն դառնում, և դու շեղբը կոթի միջից ետ ես քաշում ատամներով... շրթունքներդ բռնում են մետաղը, և պողպատի սառը համը քեզ կարծրացնում է, քո ջլերն ուռչում, պրկվում ու կարծրանում են: Եվ ահա դու կանգնած ես ձյուների մեջ, շալվարի սառած փողքերը քո ցնցումներից թխկում են, կարծես ձող ես տաշում՝ կտրում ես եղունգդ, և

երեխայի քո նիհար, մոխրագույն, չոր մաշկի մեջ տղամարդու ձիգ ջլեր են:

Արմիկ Մնացականյան անունով պատանին հևք չուներ և ոտնաձայն չուներ, եթե մի քիչ ուներ էլ՝ հայրը չէր զգա, քանի որ իր թեթև գոյությունը հոր ետևից նա տանում էր համաքայլ: Բայց հայրը խոսեց ետ չնայելով ու որդու ներկայությունը չստուգելով, ասես՝ ինքն իր հետ էր խոսում, ասես՝ որդու ներկայության վրա վստահ էր նույնքան, ինչքան իր ներկայության: Հայրն ուրեմն միթևանու մասին բան էր պատմում, պատմում էր, որ միթևանին միշտ այդպես է եղել, միշտ՝ էդպես պատրաստ բանի է վազել... որ տասը-տասներկու տարեկան հասած տղա էր, Երկեն հողերում վարի էին, լծկանի ուսին նստած հոտաղ էր, ասացին՝ հրեն հա՜, էն ինչ կին է ձիով սարը գնում... սարի ճամփան Երկեն հողերից երևում է, ասացին. «էն ո՞վ է տեսնես սարը գնում»... Երկեն հողերից սարի ճամփա՝ մորը ճանաչե՜ց... տասը տարեկան տղա էր՝ դեռ ծիծ էր ուտում... լծան վրայից՝ ոտը տվեց եզան վրայով թռավ ու կարճ ճամփո՛վ, կարճ ճամփո՛վ, կարճառաջ-կարճառաջ՝ մինչև ծմակ մտնելը մոր դեմը կտրեց... կատակ ու շիտակ, լացով ու ծիծաղով՝ մորը ձիուց իջեցրեց ու խլեց իր կուրծքը, որ իր կարծիքով միայն իրենն էր, քանի որ տան փոքրն ինքն էր...

Դա հին, ուրախ, արևոտ պատմություն էր – և սարի շեկ ճամփա՛ն, և կանաչ այդ ազատությո՛ւնը, և որ կարմիր ձիավոր այդ կինն ահա դուրս էր գալու սարը, և զեփյուռը ալիք-ալիք խփվելու էր ձիու քրտնած մուգ լանջին, դրոշի պես փռփռալու ու խփվելու էր խեղճ այդ մոր ամոթխած օձիքին... և որ գութանի ժողովուրդն, ահա, շանը քսի տալու պես, նրան բաց է թողել դեպի շեկ ճանապարհ և կանգնած ծիծաղում է...

– Հետո,– ասաց հայրը,– ցելերի ներքևից դուրս եկավ, ալարելով, օրորվելով գալիս էր. մաճկալն ասաց՝ քնիր, այ տղա, քնիր, չէ՞ մանուկները ծծից հետո քնում են... ու ամբողջ գութանավորն ասաց՝ քնիր, այ տղա, էդտեղ նստիր քնիր...

Եվ հայրուորդի այնպես ծիծաղեցին, որ միթևանի սայլվորը երևի լսեց, եզները կանգնեցրեց ու ականջ պահեց իր հին, ուրախ, տխուր, թախծոտ պատմությանը:

Բայց Արմեն Մնացականյան անունով պատանին, հեռվից հոր հետ այդպես ժպտալով խակ այն երեխայի վրա, որ տասներկու տարեկան էր, բայց չէր ուզում մեծ լինել, մոր կրծքից կտրվել չէր ուզում և հիմա քառասուն տարեկան էր, բայց չէր ուզում մեծ լինել... Արմիկ Մնացականյան անունով պատանին, որ արդեն վաղուց էր մեծ, այդ ուրախ պատմությունից ավելի գոհ էր այն բանի համար, որ հայրն այդպես վստահ, որդու ներկայությունն այդպես չստուգելով սկսեց պատմությունը: Որդին հևք ու ոտնաձայն չուներ կամ դրանք կորցնում էր հոր հևքի ու հոր ոտնաձայնի տակ, բայց հայրը գիտեր, որ որդին այդտեղ է, ետ չգնաց, իր ետևից գալիս է: Գուցե հայրն ուսի վրայով այնուամենայնիվ նկատո՞ւմ էր նրա կարմիր շորի ցոլքը: Թե՞ հայրն իրեն լավ գիտեր և գիտեր, որ տղան նույն ինքն է, տղան իր անցյալը և ինքը տղայի ապագան է – իր ոտնահետքերը կոխելով՝ այդպես ելնելու է սառը, ամայի, արևոտ լեռը:

– Դասերդ ո՞նց են գնում,– ասաց հայրը:

Տղան ժպտաց:

– Սովորվո՞ւմ է, թե ժամանակ չի լինում գիրք բացելու:

– Մայրիկը տառերն ինձ հետ սովորեց... թե՞ գիտեր՝ հիշեց:

– Սովորել է,– ասաց հայրը,– չգիտեր: Որբ աղջիկ է եղել՝ դասի չեն ուղարկել: Որ հարս եկավ՝ ուզում էր տառերը տան փոքրերից սովորի, իմ փոքր ախպոր ուսի վրայով գրքին թաքուն նայում էր, բայց չսովորեց... ամաչեց: Ամաչեց,– ասաց հայրը.– քեզ արդեն պիտի ունենար ու փոքրիկ աղջկա պես նրանց ուսի վրայով տառ էր գողանում: Իմ հորից ու իմ մեծ ախպորից ու բոլորից ամաչեց... մեծ ընտանիք էինք: Հիմա,– ասաց հայրը,– մեր տանը սովորել է:

– Քույրիկը գրքին նայում, տառերից վախենում ու լաց է լինում,– ժպտաց տղան,– ասում է. «Ես դպրոց չեմ գնալու», դրբոց է ասում, դպրոցին դրբոց է ասում, ասում է «ինձ կօգնե՞ս»: Հրայրին ասում է. «Իմ տեղը դպրոց կգնա՞ս»:

Հայրն ու տղան ծիծաղեցին:

– Կամաց-կամաց յոլա տար,– ասաց հայրը,– մինչև էդ անտեր բանտը փակվի, ու ինձ իմ տուն թողնեն:

«Մայրենի լեզվի ընթերցարան» հինգ դասագիրքը տվեցին զոհ-

վածների երեխաներին, և տղայի թաղը դասագիրք չընկավ: Տղան մի երկու անգամ աղքատ, սառը, որբ գյուղով գնաց հասավ ներքևի թաղերը, բայց անհարմար էր ամեն անգամ տնկվել դժբախտ այդ դռներին, թե ահա ես՝ ողջ-առողջի զավակս, եկել եմ գերազանցիկի ու սիրվածի իմ դասը սովորեմ ձեր տներում, ուր օտարոտի էին անշնորհք դուռը, վառարանի տեղը, մոմլաթի նախշերը, տան հոտը և լամպի անհարմար տեղը, և մի քիչ հարազատ էր միայն «Ընթերցարանը», միայն մի քիչ էր հարազատ, ախպերիկդ ասես գյուղամիջի շատ ժողովրդի մեջ քեզ մոտենալուց ամաչում էր: Տղան չկարողացավ ուսուցչուհուն պատճառաբանել, թե ինչու չի գնացել դասը Նորիկի գրքով սովորելու, խոստացավ գնալ և դարձյալ չգնաց: Մնում էր հույս դնել առավոտները դպրոցում վռազ սովորելու վրա, բայց տներում ժամացույց չկար, սառը, մաքուր, ավլած դասարանում տղան հավաքարարուհու հետ վառարանը վառում ու սպասում էր, բայց երեխաները դեռ չէին գալիս... տներում ժամացույց չկար, գյուղի սառը լռության վրա զանգը մինչև չէր ղողանջում՝ երեխաներն իրենց տներից դուրս չէին նետվում: Գալիս էին ուշացած՝ երբ դասատուն արդեն դասարանում էր կամ ուսուցչանոցի դռանը սպասում էր: Իսկ եթե մեկնումեկը այնպես՝ պատահաբար, պատահական որևէ զնգոցի վրա շուտ էր գալիս, և նա ու տղան հավաքարարուհու հետ վառարանը դպրոցի այդ դժվար փայտով վառում էին, դարձյալ անհնար էր վառարանը թողնել, քաշվել սառն անկյուն, նստել չոր, սառը նստարանին և ականջները փակել «Ընթերցարանի» վրա, որից ուրիշի տան հոտ էր գալիս:

Զոհվածների այդ երեխաների՝ «Ընթերցարանի» այդ տերերի մեջ տղան նաև չկամություն զգաց: Նրանց ասված էր, որ դասագրքերը թեկուզ նրանց են բաժանվում, դրանք ամբողջ դասարանի գրքերն են, և նրանք ասել էին՝ այո, բայց նրանց մեջ ամեն անգամ խեղճ ու տգետ ինչ-որ ատելություն էր երևում, և չէր կարելի գանգատվել, քանի որ չէր կարելի խոսել նրանց անտերության և իր տիրավորության մասին, իսկ ուսուցիչները և հատկապես լեզվի ուսուցչուհին աննկատորեն էր սկսել, բայց արդեն շատ էր խոսում բարի նախանձի մասին, և ահա կարծես ատելություն ու նախանձ չկար, այլ կար միայն բարի նախանձ, և «նախանձ» բառը այդ դասա-

ռանում ինչ-որ մեղմ, ինչ-որ սիրելի, ինչ-որ օգտակար կերպարանք էր առնում... և այդ ժամանակ Աբովյան Նորիկը իր «Ընթերցարանը» չտվեց Մնացականյան Արմիկին՝ դասը կարդալու. դասարանում, դասարանային ընթերցանության ժամանակ, խուլ ձևացավ կամ ատելությունից իսկապես խլացավ ու «Ընթերցարանը» Արմիկ Մնացականյանի դեմ չդրեց, այլ մնաց այդպես արմունկները բաց գրքի վրա և մատները ականջներին: Ուսուցչուհու երրորդ թե հինգերորդ պահանջի հետ կտրուկ նայեց ու նստարանի երեսով մեկ այնպես հրեց, որ «Ընթերցարանը» թռավ դասարանի մյուս անկյուն: Եվ ուսուցչուհին ասաց. «Այ թե ինչու չես, Արմիկ Մնացականյան, տնային հանձնարարությունը անում»: Մյուս օրվա դասը՝ Հովհաննես Թումանյանի «Հովվի հրաժեշտը» –

Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:–
Մենք կգանք ձեզ մոտ նորեկ գարունքին,
Երբ հնչեն ուրախ երգերը կրկին,
Երբ որ սարերը զուգվեն կանաչով,
Երբ որ ջրերը երգեն կարկաչով:
Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:–

ուսուցչուհին արտագրել էր և տվեց Արմիկ Մնացականյանին: Դա սքանչելի ձեռագիր էր՝ և սպիտակ, մաքուր թո՛ւղթը, և ուղիղ տողե՛րը, և տողարանքների ուղիղ ճերմակությո՛ւնը, և թանաքի մանուշակագույն առկայծո՛ւմը, և հրաժեշտի այդ զնգուն թախի՛ծը՝ երբ ուզում ես լաց լինես ու ժպտաս և կոկորդդ կլթում է... և Արմիկ Մնացականյանը պետք է ունենա այդպիսի ձեռագիր և սպիտակ, մաքուր թղթին գրելու է մանուշակագույն թանաքով... բայց հո չէր կարելի ուսուցչուհուց ակնկալել ամբողջ դասագրքի արտագրությունը:

Եվ նա հիշեց, որ հայրը տախտակ էր ռանդում (գուցե շինում էր իրենց տան դուռը), մայրը նրան՝ Արմիկին ամեն անգամ հանում էր հոր ոտքերի տակից, իր կարծիքով կեղտուփոշու միջից, և ամեն անգամ նա նորից էր խցկվում փայտի այդ թարմ բուրմունքի, ռանդայի խշրտոցի ու փափուկ խուշուրի մեջ, և մատիտը հոր ականջի ետևն էր, և հայրը գոգնոց էր կապել, և հայրը ձեռքերը կողերն ի վար սեղմեց, ծգվեց և արտասանեց: Արմիկ Մնացականյանը դպրոցում

հետո տեսավ, որ ուսուցիչների դեմ գրատախտակի մոտ այդպես ձգվում են աշակերտները: Հայրն ահա այդպես դպրոցականորեն ձգվեց ու արտասանեց.

Է՜յ կանանչ ախպեր,
Է՜յ ճանանչ ախպեր,
Արի՜, քեզ հետ բեր
Արևի շողեր,
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վտակ,
Երկինք կապուտակ,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն...
Է՜յ կանանչ ախպեր,
Է՜յ ճանանչ ախպեր...

Բոլոր տողերը հայրը երկարացնելով էր ասում. Բե՜ր անուշահոտ Ծի՜լ, ծաղիկ ու խոտ, Կարկաչուն վտա՜կ... Եվ հարցրեց. «Կանանչ ախպերն ո՞վ է, Արմիկ»: Ավելի վաղ, տղայի հիշողության սահմաններից դենը, գուցե օրորոցում՝ հայրը սովորեցրել էր, և նրանք հիմա միասին ասացին. «Գա՛ռունն է կանանչ-ճանանչ ախպերը», և իրար միասին գովեցին. «Ապրե՜ս»:

Հին այդ կանչերը տղային դասագրքի տեղ էին ցույց տալիս, սեփական, հարազատ, ընտանեցած, տոհմիկ դասագրքի, որի միջից նայելու էին Հովհաննես Թումանյանի հետ՝ պապը, որ հիմա հանգչող ծնկները օջախին դեմ էր արել և սպասում էր պատերազմը վերջանա. տատը, որ ամեն օր գնում մատուռի շուրջը յոթ անգամ յոթ ծնկասող էր տալիս իր բոլոր-բոլոր զավակների՝ որդիների, դուստրերի ու թոռների համար. մեծ հորեղբայրը, որ ռազմաճակատում էր և նամակ չէր ղրկում. հայրը՝ որի մասին ամեն օր ասում էին գալու է և ամեն օր ասում էին ռազմաճակատ է ղրկվել. մեծ հորաքույրը, որ Դսեղ էր ամուսնացած և երեք տղա ուներ, և ամուսինն ասում էին բանակից պիտի գա. բարի, մեղմ, սիրուն հորաքույրը՝ որ դարձյալ երեք տղա ուներ և ամուսինն ասում էին զոհվել է, բայց ավելի լավ էր դեռ չհավատալ ու երբեք չհավատալ, չլացել, հուսալ ու սպասել. Նարգիզ փոքր հորաքույրը, որ դարձյալ Դսեղ էր ամուսնացած և մի տղա ուներ, և ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել, բայց ուսումը չէր շարունակել, որովհետև սիրահարվել էր... և փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ, բայց ամաչեց ու գնաց. և մեծ հորեղբոր մեծ որդին, որ պատերազմի պատճառով դպրոցից ետ էր դարձել աշխատելու. և նրա քույրերն ու եղբայրը՝ Սոխակը, Ելենը, Վալոդը... բոլորը, բոլորը, ովքեր գոնե մի անգամ

թերթել էին այդ դասագիրքը, նայելու էին նրա էջերից և մեծ ընտանիքի նրանց բույրը տղային առնելու էր իր մեջ:

Ինչպես կատուն, որ թաքուն որևէ միտք ունի, բայց ինքն ու դու դեռ չգիտեք, թե թաքուն ինչ մտադրություն ունի և այժմ դեռ տանն է և անուշադիր դեսուդեն է գնում, տղան կատվի պես մի քիչ պտտվեց պապի-տատի վառարանի մոտ, մի քիչ լսեց-չլսեց նրանց երանիներն ու ախուվախերը, մի քիչ հետաքրքրվեց, թե պապը Հովհաննես Թումանյանին չի՞ տեսել և նրա պատասխանը չլսեց, հետո չքացավ:

Հին, մեծ ընտանիքի միամիտ, առատ ժամանակների շտեմարանից հացի հոտ էր գալիս: Այդ խավար լռության մեջ տղան իրեն ազատ մկնիկ զգաց: Տղան չգիտեր, որ ջաղացպանի պես ալրոտված է ելնելու ամբարից, տղան ծնկասող էր անում, էջեր ու գրքեր էր գտնում, բերում նայում էր լույսի բարակ, պղնձագույն շեղբի մեջ, *«Հին աշխարհի մարդիկ կարծում եյին յերկիրը մի մեծ տափարակ ե»,* և այդ ամբողջ ժամանակ տղայի հիշողության մեջ, կարծես տղան ինքը իրենից առաջ մի անգամ արդեն ապրել էր պապի մեծ օջախում, տղայի լսողության խորքերում և աչքերի ետևում խուլ զնգում, խուլ ծիծաղում, անմեղ դավեր էր անում, լուռ ժպտում, խուլ բողոքում ու լուռ արտասվում էր հին, մեծ ընտանիքը. աղջիկ հորաքույրները գորգ էին ծեծում, տատը կրակի վրա ապուր էր խառնում, պապը մութաքային թիկնել էր, հորեղբայրն ուզում էր ծնկին դնել իր փոքրիկին, բայց պապի ներկայությամբ քաշվում էր, փոքր հորեղբայրը տան աղմուկից թաքնվել էր տորքի ետևում և դպրոցական բերանացին սովորում էր քույրերի ծիծաղի ու գորգի խուլ ծեծքի տակ:

Ամբարը ձեռնափայտով ծեծեցին, և տղան սուս արավ: Պապն, ուրեմն, կարողացել էր բարձրանալ ձեղուն: Ձեռնափայտով ամբարը ծեծեցին ու ասացին. «Էս ի՞նչ մուկն է մտել մեր ամբարը»: Տղան մանրիկ ծիծաղեց, կարծես մենակ չէր ու խավար չէր – հոր կամ հորեղբոր հետ էր, նրանք նույնպես տղա էին և, գողության մեջ բռնված, ծիծաղում էին: «Էս ի՞նչ մուկն է մեր գրքերը կրծում,– ասաց պապը,– իմ երեխանց գրքերն էս ի՞նչ ճստիկ մուկն է կրծում. գնամ սև կատուն բերեմ ամբարը գցեմ՝ մկանն ուտե», ասաց պապը: Իր

խավարի մեջ սսկված՝ տղան այն ժամանակ որոշեց, որ պապոնց համար սահնակով փայտ է տանելու, միշտ՝ սահնակով փայտ է տանելու... և դեռ չի տարել և դեռ տանելու է: «Բա դե գցիր, է,– այն ժամանակ ասաց տղան,– սև կատու գցիր՝ ինձ ուտե»: «Թե գիտես թե ծիծաղում ե՞մ,– ասաց պապը, և տղան մտքում կրկնեց «թե գիտես թե»,– թե գիտես թե գցիլ չե՞մ»,– կափարիչի բացվածքից նայեց պապը: Նա այնքան էր թույլ, որ նրա ծիծաղն ու շիտակը չէին տարբերվում: «Թե գիտես թե», մտքում կրկնեց տղան:

Սարսափելին հետո եղավ. դասագրքի բառը մի կողմ կացավ, տղայի դեմից ուղղակի ետ լողաց, և նրա տեղը հայտնվեց պապի *«թե գիտես թե»*-ն հայտնվեց ու տղայի դեմ եզան նման պինդ նստեց: Բայց դասարանի առաջ, քարտեզի մոտ կանգնած չէր կարելի ասել «հին հույները թե գիտեին թե աշխարհը մի մեծ տափարակ է»: Տղան մեխվեց ու մնաց: Ոչ հիշողություն, ոչ լարում, ոչ հուշող, ոչ էլ ուսուցչուհու օգնություն – տղան հետո կարող էր ասել, թե տախտակի մեջ ժանգոտող մեխն ինչ է զգում, և ինչ էր զգում Աշխարհբեկ հորեղբոր գերանը, որ վռվել մնացել էր և իրեն քաշքշում էին, և ինչ էր զգում Թոզի պապի կովը, որ տիղմի մեջ կլլվում էր և սպասում էր լրիվ կլլվի: Իսկ ուսուցչուհին ասում էր «սպասում եմ», այդ հավիտենական անզգայության մեջ երբեմն ասում էր «սպասում եմ»: «Նստիր,– ասաց ուսուցչուհին,– «վատ», «շատ վատ», տեղդ վեր ընկիր»,– ասաց ուսուցչուհին, բայց դա այլևս սարսափելի չէր, քանի որ տղան շարժվեց ու տեսավ, որ ինքը տիղմ վռված կով չէ, տախտակի մեջ մեռնող մեխ չէ: «Էդ էլ ձեր գերազանցիկը», եկավ Նորիկի ձայնը, և տղան մտքում ձեռքը նրա ասածի վրա թափ տվեց: «Դու արի,– եկավ ուսուցչուհու ձայնը,– տեսնենք դու ինչ պտուղ ես», և Նորիկը միանգամից պատմելով գնաց. «Հին աշխարհի մարդիկ կ ա ր ծ ո ւ մ էին երկիրը տափարակ է, տափարակը կ ա ր ծ ո ւ մ էին վերջ ունի, որից հետո սկսվում է անհայտ մեծ ծովը»:

– Ես քո դասագիրքը գտա,– ասաց տղան.– քո, մեծ հորեղբոր, հորքուրի... ձեր հին տան դասագիրքը գտա:

Հայրն ուսի վրայով ետ նայեց:

– Ամբարում էր,– ասաց տղան:– Շտեմարանին դուք ամբար չէի՞ք ասում:

– Ինչարանին չէինք ամբար ասո՞ւմ,– բարձր ուսի վրայով ետ նայեց հայրը:

– Շտեմարանին:

– Շտեմարան,– կրկնեց հայրը:– էդ ի՞նչն է:

– Ամբարը,– ասաց տղան:– Ամբարին դպրոցում շտեմարան ենք ասում:

– Շտեմարան,– հեգնեց հայրը,– ամբար: Չափսերը բռնել՝ փոքր էի սարքում,– ասաց հայրը.– պապդ ասաց պուճուր է՝ չափսերը մեծ բռնեցի: Տատդ՝ իմ մերը, ասաց «մեծ ընտանիք ենք, թոռներ են, երեխա ես ունենալու, բա դա մե՞ծ օջախի ամբար է»: Ավելի մեծացրի: Հիմա էդ է տեսել ես,– ասաց հայրը.– մեջն ի՞նչ կար:

– Հաց չկար, հացի համար չէի մտել,– ասաց տղան.– հացի հոտ էր գալիս, ինձ համար գիրք էի փնտրում: Դուք էս անցել ե՞ք,– ասաց տղան.

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Կորած գնում են հեռու,
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու:

Հայրը դանդաղեց, կանգ առավ, շուռ եկավ, ուզեց բան ասել՝ լռեց: Դարձյալ ուզեց խոսել՝ չխոսեց:

– էդ իմ փոքր ախպոր դասն էր,– ասաց հայրը,– քո փոքր հորեղբոր: Գնացել հին ամբարում գտել ես: Ամաչեց՝ բանակ գնաց: Գիրքը գնացել գտել ես: Ոչ,– ասաց հայրը,– մի կարճ արանք հույս ու խաղաղություն եղավ՝ իմ հերնումները կարծեցին ձիերը կալերում պիտի շրխկան, ջաղացներում աղունի հերթ է լինելու, ամբարներից պիտի հացի հոտ գա: Եթե նայես ու նորից նայես... բայց չնայես, գործ չունես... եզան ձախ ականջի ետևը մեր տնական նշանն է, էդ եզը մեզանից է գնացել կոլխոզ: Գործ չունես: Քառանց Սարգիս պապը հրեն գութանը յուղել ու յուղած պահել է տան տակի հարկում... թող յուղած սպասի, սպասի ու փտի դարեվոր պողպատը... Գործ չու-

նես,– գոռաց հայրը, և նրա ձայնը պատառոտվեց:– Ետ դարձիր,– ծղրտաց հայրը, և քամին նրա ծղրտոցը պատառոտեց:

Քամին վնգում էր վերջին ծառերի մեջ, բայց անտառի պռնկից ամբողջ բաց, կապույտ լանջով մինչև լեռան Կոտրած թամբ՝ քամին ձյունի նույնիսկ մի քուլա չէր պոկում – լեռը սառած էր: Հաճարենիները տնքում էին, գարնանը նրանք նորից էին տերևելու, Թամբի ելուստները արևի մեջ էին, և այդ արևները թույլ, հեռավոր, օտարի, թշնամու կրակից եկած ցոլքեր էին թվում. անտառի պռնկից մինչև Կոտրած թամբ՝ լանջի անունը Մեղրածաղկի էր... բայց հաճարենիները կարծես երբեք չէին տերևելու և լանջի անունը թշնամին էր ծաղրով Մեղրածաղկի դրել: Կեղևների մեջ ասես ծայրեծայր սառույց էր և հաճարենիները հիմա փշուր-փշուր էին լինելու, և քամին վնգում էր սառցալուլաների մեջ, և սառցալուլա էր թվում սեփական ողնաշարը: Այդ է: Ուզում ես՝ մտքով գնա Թումանյանի տաք, բարի ապարանքները, ուզում ես՝ ձեռներդ քաշիր մորդ աղջկական ու քրոջդ ապագա շորի թևքերը... էդ է:

– Հո արա՞գ չենք գնում, Արմո,– հարցրեց հայրը:

Հոր ետևից տղան ինքը չէր գնում, իր քայլն ու գոյությունը տղան չէր զգում, հոր ետևից տղային տանում էին ինչ-որ թևեր, բարեկամության թե ընկերության ինչ-որ կապ:

– Չպիտի արագ գնանք,– ասաց հայրը,– թե չէ կքրտնենք՝ կտա սառույց կշինի: Որ տեսնես արագանում եմ ու չես հասնում՝ ասա:

Դա արդեն տղայի պետքականության որոշակի ապացույց էր:

– Հերուտղա գնում են հնձի,– պատմեց հայրը, և տղան շեկ արտերում իսկույն տեսավ իրեն ու հորը: Հայրը ծիծաղեց:– Գնում են հնձի՝ նախ մի գդալները հանում նստում են հաց ուտե՞ն: Ամանը սրբում են: Տղեն ասում է՝ համա թե կերանք հա՞, այ հեր: Ասում է՝ բա ես առյուծ, դու կորյուն, բա կուտենք բա՞: Իրիկունը որ գալիս է,– ձայնեց հայրը,– ետ են դառնում տեսնում բան չեն հնձել: Հերն ասում է. դե ես ծեր, դու էլ երեխա՝ ինչ էինք հնձելու, այ որդի:– Հայրը ծիծաղեց: Սառը, ամայի, անկենդան անտառում հայրը ծիծաղեց, բայց կարծես ծիծաղում էր շեկ արտերի մեջ:

Դա իրենց պատմությունը չէր, ինքն ու հայրը այդպես չէին լինի: Գեղեցիկ էր, որ հերուորդի արտում էին, որ փոքրիկ սփռոցի կողքերին իրար դեմ հերուորդի նստած էին, որ հերը ծեր էր և հոր ձայնը նույնպես ծեր էր... բայց դա ինքն ու հայրը չէին:

– Արմո,– մեղմ, կարծես շոյելով ասաց հայրը,– ասում ես ահա Հովհաննես Թումանյանը...– և հոր ձայնի մեղմությունի՞ց էր, տանջ-ված թուխ դեմքի մեղավոր ժպիտի՞ց, թե՞ որ ծառերի արանքով լեռան կատարը մի պահ բոցկլտաց, հոր ասելիքի դիմաց տղայի հոգում բաց-վեց լուսավոր, ջերմ մի հովիտ, տղան կանգնեց ինչ-որ տոնի, ինչ-որ նվերի, գարնան ինչ-որ օրվա, ինչ-որ մեղեդու առջև: Հայրը նրա ոտքերի մոտ կռացել, կապում էր նրա տրեխի քուղը, նա ձեռքի երեսով քիթը սրբում էր, բայց նրա ոչ ոտքե՛րն էին այստեղ, ոչ քի՛թը և ոչ էլ նա զգա՛ց, որ քուղը հայրը պինդ կապեց. որպես գարնան մաքուր քու-ռակ կանաչների մեջ՝ սիրտը նրա կրծքում խաղում էր, որպես թիթեռի շրշուն սահք ծաղիկների գլխով, որպես մանուշակի թաքուն բույր, որպես մեղուների խուլ ու զնգուն համերգ հովտի վրա՝ նրա հո-գին բացվում ու ծավալվում էր:

– Հովհաննես Թումանյանը չգիտեմ,– խնդրեց հայրը,– դե էդ է եղել անցել է, լավ է եղել թե վատ՝ եղել է... բայց ես ուզում եմ դու Աշոտիկի պես տղա լինես, Աշոտիկի, Աշոտիկի:

Եվ տղան իսկույն հավատաց, որ ինքը լավը չի, ինքը չկա – լավը, օրինակելին, սիրունը, ում արժանի ինքը ոչինչ-ոչինչ չուներ տալու, բայց կուզենար տալ ամեն-ամեն ինչ, Աշոտիկն է, Աշոտը, Աշոտիկը: Արմիկ, Արմո, Արմենակ անունով պատանին դեռ չգիտեր ով է Աշոտիկը, որտեղ է, ինչ է անում, բայց իսկույն ուզեց իր անունն Աշոտիկ լինի:

– Որ ուզում ես՝ կդառնամ,– ասաց տղան:

Հայրը մեղավոր ու թերահավատ ժպտաց:

– Հեշտ չի,– ասաց հայրը,– դժվար է:

Այդտեղ էր, այդ օրը՝ սառնամանիք քամու մեջ վնգստացող լեռան տակ սարի ճանապարհին էր, որ նրանց հեռավոր ազգականի որդին՝ Աշոտիկ Թոմայանը, մտավ գլուխը ոչխարի մկրատով խու-զած՝ որպեսզի մազի մեջ ոջիլ չընկնի, բեռան պարանը ձիու խամուտի պես կրծքին անցըրած, մոր աղջկական ու քրոջ ապա-

գայի դեյրան հագին, կարմիր, ճաքճքած ձեռքի երեսը փսլնքոտ Արմիկ, Արմո, Արմենակ անունով տղայի կյանք, մտավ որպես հեռուների կանչ, որպես մաքրություն, որպես կարոտ:

– Ինքը ո՞վ է,– հարցրեց տղան,– գեներալ է՞:

– Չէ,– ասաց հայրը,– կդառնա: Քո հասակի տղա է, դպրոցի աչքի լույսն է, գերազանցիկ է, ամբողջ Երևան քաղաքում մատով են ցույց տալիս, մի հատիկ է: Ախպերներն էլ պակաս չեն, բայց Աշոտիկը հատուկ է: Հանդիսավոր ժողովներում բեմ է բարձրանում ու խոսում, արտասանում, սովորեցնում: Դու կարո՞ղ ես:– Հայրն ինքն էլ չէր կարող: Հենց միայն այդ մտքից կարելի էր քրտնել ու կարկամել:– Հայրը ծիծաղեց.– Պերճիկն ու Ալիկը երկուսով մեղրի համարյա թե մի լրիվ խո-րիսխը կերան ու փորներին խփեցին, հերները ժպտաց, Ստեփան պապը ծիծաղեց: Բայց Աշոտիկը՝ ոչ. քո հասակին է, բայց կարծես մեծ մարդ լինի, լո՜ւրջ. իր բաժինը կերավ, «մամա, չի՞ կարելի էս մի կտորը չուտել», ու քաշվեց իր սենյակը: («Քաշվեց իր սենյակը», մտքում կրկնեց տղան): «Մամա, թույլ տալի՞ս ես էս մի կտորը չուտել», մեղրահացի՛ մասին: Ոչ, այ տղա, ոչ,– մոլորվեց ու հիշեց հայրը.– ասավ՝ «մամա, թույլ տալի՞ս եք». իրենց մի հորն ու մի մորը նրանք ասում են «եք». կարծես ոչ թե մի հեր ունեն, այլ մի քանի, ոչ թե մի մեր ունեն, այլ մի քանի: Եվ իրոք էլ էդպես է. նրանց Ստեփան պապն ու հայրը երկուսով արդեն մի տասը մարդու ճարպկություն ունեն: Լավ սովորիր, լավ,– սթափվեց հայրը,– լավ չես սովորում:

Դա ճիշտ էր. Աբովյան Նորիկը լավ էր սովորում, նրա ետևից՝ վատ չէր սովորում նաև տղան, Նորիկի մայրը ֆերմայի հետ Քռի ձմեռանոցներն ուղարկվեց, Նորիկն սկսեց չսովորել, և նրա ետևից, ասես ամաչելով նրանից ընդունակ երևալ, խամրեց նաև տղան... Բայց հիմա դրանից ամոթալին այն էր, որ տղան մառանի պուճախում շշի մեջ սառած մեղր էր գտել, նկուղում, թաքուն, փչելով, ափերով, անութներով ինչքան էլ տաքացրել էր՝ մեղրը չէր հալվել, և գուլպա գործելու մոր ճաղերով մեղրը հանել ու լիզել էր, խրել, հանել ու լպստել էր... Տղան եթե կարողանար, ինչպես որ մուգ կանաչ շիշն էր թաքցրած մառանի պուճախում, խայտառակ այդ արարքը կորցնել հիշողության որևէ քնջում... Տղան իրեն ատեց,

զզվեց նաև գլուխը նույնպես խուզած եղբորից, որ նայում էր դունչը շան պես թեքած, տղային հիմա թվաց, թե եղբայրն էլ գիտի մուգ կանաչ շշի տեղը: Տղան քիչ էր ապրել, վատ վարքի աղբիսը նրա մեջ փոքր էր, տղան իրեն էր վերցնում եղբոր վատությունները նույնպես, բայց մուգ կանաչ շիշը չէր կորչում, գլուխը դարձյալ ցցում էր:

Իսկ հայրը դարձյալ ոսկեգույն երեք հատ մեղրահացից էր խոսում: Հոր Օհանես թե տղայի Ավետիք պապը, ավելի ճիշտ՝ թե մե՛կը և թե մյո՛ւսը և թե ինքը տղայի հա՛յրը, Աշոտիկի, Պերճիկի, Ալիկի Ստեփան պապին, վաղո՜ւց, պապեպա՛պ, պարտք էին եղել այդ մեղրահացերը, պարտք էլ չլինեին՝ խորիսխը մեր ինչի՞ն էր պետք...

– Մեր ինչի՞ն է պետք,– կրկնեց տղան:

Ավետիք պապը մեղրահացերը ղրկել էր քաղաք, և նրանց Ստեփան պապը տղայի հոր տեղը բանակում փոխել էր՝ հետևակից տարել էր հրետանի, ուր, ճիշտ է, ուղիղ նշանառության մի արկով ջարդվում էին և՛ թնդանոթը, և՛ մարդիկ, բայց պատահում էր նաև, որ արկը հեռու էր ընկնում, համենայն դեպս՝ Թոմայան Ստեփան պապի մենատնից հեռու, և նա կապուտաչյա պայծառ հավատով էր ղրկել ռազմաճակատ տղայի հորը, հորեղբորը և բոլոր ծմակուտցիներին, ովքեր մեղրահացով գնացել էին նրա ոտքը:

– Էս մի դիքն էլ դուրս գանք, Արմո ջան,– ասաց հայրը,– ու ամենքն իրանց տուն, կատուն հորանց տուն: Հո արա՞գ չեմ գնում:

– Խոզ էլ էի տարել,– նեղվեց ու ծիծաղեց հայրը.– ի՞նչ գիտենայի հոտից զզվում են, ի՞նչ գիտենայի հարսը քիթը բռնելու է: Մեր կարծիքով լավ բան էի տարել,– ծիծաղեց ու նեղվեց հայրը, խուրջինն ասես դեռ ուսին ու մեղրահացի կապը ձեռքին կանգնած էր նրանց դահլիճում և բեռը չգիտեր ուր դնի:– Խոզը խանձել, կարմիր մաքրել ու տարել էի, խանձահոտից զզվեցին: Դու չես տեսել,– ասաց հայրը.– ես ու քո մայրը գիշերով թաքուն խանձեցինք, որպեսզի խանձած կաշվից դու չուզես: Լման, կարմիր խանձած խոզ էր, էդ սովի ու աղքատության միջով էդպես տեղ էի հասցրել: Ստեփան պապն ասաց. «Մեծ տղա ես, չգիտե՞ս, որ մենք խոզ չենք ուտում»: «Դուրս տար, դուրս տար, դուրս տար, ասաց, հանիր տնից»: Բայց մեղրի

համար չխոսեցին: Հիմա չգիտեմ,– ասաց հայրը,– խոզն իսկապե՞ս դեն գցեցին, թե տվեցին սոված հարևան-մարևաններին: Դե ետ ուզելն անհարմար էր:

– Իրենք թուրք են, չէ՞,– ասաց տղան:– Թուրքերը խոզ չեն ուտում:

– Թուրք չեն՝ հայ, Մնացականյան մեր ցեղից:

Տղայի սիրտը ցատկեց. Մնացականյան իրենց երամի ընտիրներն ահա թռել, ճախրում են հեռուներում, Մնացականյան իր եղբայրներն ահա դահլիճներում զնգում են:

– Աֆերիստ մարդ էր,– ասաց հայրը. տղան այդ բառն առաջին անգամ էր լսում, և աֆերիստը տեղավորվեց մաքուր, լուսավոր, ճոխ, նվագուն, տաք ապարանքում, և մինչև օրս էլ տղան չի կարողանում աֆերիստը հանել թոռների վստահ գերազանցիկության, բյուրեղյա ջահերի, թոռների մոր շքեղ գեղեցկության, պապի հանգիստ բարեհոգության, թոռների հոր զուսպ, կարծես բացակա ներկայության և նուրբ, ճշգրիտ, կարծես մանրիկ, բայց խոշոր խարդախության այդ ապարանքից:

– Աֆերիստ՝ այսինքն խելացի,– ասաց հայրը,– այսինքն՝ հասկանում է ուր կանգնի, որ ոտի տակ չկորչի: Է՜, երբ էր, ես քո տարիքին էի, ասաց գյուղն ապագա չունի ու քոչեց, հիմա էս օրին ենք հասել, բայց նրա խոսքի մեծ իմաստը չենք հասկանում ոչ ե՛ս, ոչ իմ հեր Ավետի՛քը ու ոչ էլ դու ես հասկանալու, Արմո ջան:

Այդտեղ՝ ծմակը վերջանալուց առաջ էր, որ երեսը զուտ մոխրագույն, աղվամազը փշաքաղված, աչքերը ցրտից դուրս պրծած, գլուխը ոչխարի մկրատով խուզած ու նիհար ծոծրակը բաց տղան, սայլի մի հետքին հոր դեմ կանգնած՝ շշնջաց.

– Ստեփան Մնացականյան, Պերճ Մնացականյան...

Տղային հետո թվում էր, թե հայրն այդտեղ երկար լռեց, հայրը խեղճ-խեղճ ժպտում ու ասելիքը չէր ասում:

– Գնացինք,– ասաց հայրը:– Գնացինք-գնացինք,– ասաց հայրը: Հայրը թիկունքը տղային դարձրեց. նա երևի չէր ուզում երեսառերես տեսնել լքվածի այն վիրավորանքը, որ տղայի մեջ առաջացնելու էր մաքուր ճշմարտությունը:– Թոմայա՛ն: Ազգանունները փոխել են, Թոմայա՛ն:

Որ նրանք գյուղը լքել են, որ իրենց ազգանունը անասնապահի իրենց շորերի հետ թողել են գյուղում, որ նրանք չեն ուզում Մնացականյան լինել՝ այդ քամահրանքը տղային ուշ, հետո, տասնամյակներ հետո խոցեց: Հիմա՝ սայլի իր հետքով հորը հավասար ու զուգահեռ գնալով որպես երիտասարդ արջառ, տղան, ծածուկ հորը նայելով, ուզեց ինքը նույնպես Թոմայան լինել, Թոմայան Աշոտիկ, Թոմայան Ալիկ, Թոմայան Պերճ կամ, եթե դա նրանց ապարանքում ծիծաղելի չի հնչի, Թոմայան Արմենակ ու նրանց եղբայրը լինել... բայց հայրն այստեղ ձյուների մեջ մենակ էր մնում և գյուղում մենակ էր մնում գլուխը ոչխարի մկրատով մարգ-մարգ խուզած, անգլխարկ, դունչը թեքելով լուռ շան պես նայող եղբայրը...

Կոտրած թամբից ձախ՝ լեռան ուսով շեղակի գալիս ու Մեղրաձաղկի լանջով ձորն էր ընկնում ձյունե մի արահետ: Հայրը նկատեց, ուշք չդարձրեց, հետո նայեց՝ ականջը ուսի ետևը պահելով:

– Էդ ո՞ր հիմարն է...– եկավ հոր ձայնը:

Սակայն նույն հետքը ձորից դուրս էր գալիս, պտտվում մասրենու ձնաթմբի շուրջը և գալիս հատում սարի ձյունե ճամփան: Հայրը չտեսնելո՞ւ տվեց, չտեսա՞վ – անցավ, բայց դա բաց խաբեության նման էր, քանի որ տղան նկատել էր նաև սառած արյունը: Հայրը շուռ եկավ և հետքին նայելուց առաջ տղայի երեսին նայեց: Դա արջի ու մարդու խառը հետք էր: Արջի հետք էր և մարդու հետք էր՝ չնայած մարդու ոտքերին կոշիկ չէր եղել, կամ կոշիկը փալասներով փաթաթված էր եղել: Ո՞վ էր ում հետևել՝ մարդը արջի՞ն, արջը մարդո՞ւն: Արյան երկու դժվար կաթիլ կար, ընկել ու քարացել էր: Ճամփեզրի յառը ա՞րջն էր դժվար մագլցել, մա՞րդն էր ետ սահել, թե՞ ետ էին գլորվել երկուսը միասին: Ճամփեզրով մի քիչ վերև էին գնացել, հետո հետքը աջ էր խփվում՝ դեպի ծմակի պռունկը: Տղան իրեն միամիտ երեխա դարձրեց, որպեսզի հայրն իր համար չվախենա ու սուտ հնարի:

– Չիավոր է անցել,– ասաց տղան:– Չիավոր է, չէ՞, եղել:

Հայրը թքեց, ուղղակի թքեց այդ պատմության մեջ՝ արջի տառապանքի և մարդու տառապանքի, այդ խորհրդավորության ու այդ հերոսականության մեջ.

– Վախից գլուխը շեքն է կոխել՝ ծիավո՜ր: Չէ՜ մի ծիավորվելու գլուխը բարձր էր ման գալու:

Լեռան թամբից՝ Կաղնուտ հեռավոր ժայռերում քարանձավներ կան. տղան այդ հետքերն սկսեց քարանձավից, վերելքներով-վերելքներով բերեց գցեց լեռան այս երեսը, ճանապարհը կտրեց ու անցընեց ձորերով դեպի Քոշաքարա հեռավոր սարահարթը: Մտքով՝ տղան արդեն սարի գլխից նայում ու տեսնում էր նրանց սև կետերը ձյունածածկ սարահարթում: Նրանց ուղին ե՞րբ էր սկսվել. վաղ առավոտյա՞ն՝ երբ տղան սպասում էր դռան տակ, երեկ գիշե՞ր՝ երբ տղան վճռեց հոր հետ խոտի գալ, մի շաբաթ առա՞ջ, մի ամի՞ս առաջ, թե՞ ամբողջ պատերազմի ժամանակ վիրավոր արջի ետևից նա լուռ քարշ էր գալիս:

Ճամփաբաժան ելան, ձմեռանոցի ճանապարհը շեղակիորեն գնաց դեպի լեռան թամբը, բայց հայրն իր ճանապարհը չմտավ և կանգ չառավ – նույն թափով գնաց Կապույտ աղբյուրի արահետով, որ ձյան տակ հավասարվել էր լանջին: Հայրն, ինչ է, որոշեց ձմեռանո՞ց չգնալ, այդ սառնամանիք, դժբախտ աշխարհում գոմի դռան ջարդվածությունը հորը չնչի՞ն թվաց, հայրը որոշեց տղայի շալակն ի՞նքը կապել, ինքը կապել ու տղայի թևերն անցընել պարանի նեղվածք: Տղան հետո հասկացավ, որ հայրն ուղղակի փախավ, ուղղակի չուզեց տեսնել իր բարձված երեխային և հեռացավ – երեխայի չարչարանքը իր աչքից թող հեռու լինի: Հայրը բլրի վրայից իրենց խոտն էր ցույց տալիս:

Բլրի գլխին՝ քամու վերջին ծվենը պոռթկաց նրանց ականջների տակ, նրանք բլրի ետևն անցան, և մեծ, պայծառ, ամայի, մեռյալ խաղաղություն էր: Քամին վնգում էր լեռան ստվերոտ լանջին, իսկ այս կողմը արև խաղաղություն էր: Տղան ականջները տրորեց, հայրուորդի կանգնած նայում էին, և տղայի ականջներում վշշաց մինչև Քոշաքարա մեծ սարահարթ սպիտակ տարածությունների ամայի լռությունը: Ոչինչ չէր շարժվում, ոչինչ չկար: Սառած գետակն ի վար տասնութ կիլոմետր ներքևներում գուցե տրոփում էր գերիների չնչին հույսը, ներքևի անտառապատ ձորերում մի տեղ գուցե մարմրում էր նրա հույսը և արջի հույսը, բայց ոչինչ չէր երևում, ոչինչ չկար:

– Բան է, ճամփիդ եթե պատահի,– ասաց հայրը,– սուսուփուս

անցիր գնա, չես տեսել: Իսկ եթե հանկարծ խոսեցնի, բան հարցնի՝ ասա մենակ չեմ, հերս ետևիցս գալիս է, պապս ետևիցս գալիս է, մերոնք գալիս են:

Խոտի բլուրը չէր երևում: Տղայի հայացքը հածեց լանջով մեկ, բայց բլուրը չէր երևում: Թմբեր էին երևում, բայց դրանք մրջնաթմբեր էին: Ամբողջ սպիտակ լանջին մի փոքրիկ սև խալ կար, տղան հասկացավ, որ դա ճլկուտի աղբյուրն է, տղան տեսավ նաև ճլկուտի բարձր, չոր ցողունների միայն գլուխները, ձյունն ուրեմն այդքան բարձր էր: Տղան խոտի բլուրը գտավ, բայց չուզեց հավատալ, որ դա իր ու մայրիկի աշնան բարձր բլուրն է. մրջնաթմբի չափ մի բան էր և ձյան տակ մրջնաթումբ էր թվում:

– Բա ինչո՞ւ չի կրակում,– ասաց տղան.– փամփուշտ չունի՞:

– Փամփուշտ չունի, հրացանը ժանգոտել է, հրացանի ասեղը կորցրել է, հազարումի անհարմարություն,– ասաց հայրը:– Թշնամի էս լռության մեջ տրաքացնի՝ ի՞նչ ասի: Գող է, գող,– ասաց հայրը,– վախկոտ գող է, կյանքը գողի պես հինգ տարի է թաքցնում է: Սառանք,– ասաց հայրը,– քեզ տեսնեմ:– Ոտքերը շեղակի դնելով՝ հայրը գնաց դեպի սարի գլուխը, և տղան թափով ներքև նետվեց:

– Արմո՜,– եկավ հոր ձայնը:

Տղան կանգ առավ ու ետ նայեց: Պայծառ արևի մեջ կանգնած՝ հայրը կարծես թե ժպտում էր:

– Տեսնես աչքդ չի ուտում՝ չամաչես:– Հայրը լանջը հատելով ու անտառի գլխով՝ կարճ՝ ձեռքը շպրտեց դեպի գյուղը:

– Արմի՜կ,– նորից եկավ հոր ձայնը:

Հայրը հիմա պայծառ լանջին չէր, բլրի գլխին էր, և քամին նրա ձայնը պատռտում էր: Հայրը շուռ եկավ, կռացած գնաց, և կարծես հայրն ինքը չէր գնում, քամին էր տանում, և նրա փեշերի ծափերը հանգան:

– Արմենակ,– լսեց տղան, ետ նայեց, բայց դա այլևս պատրանք էր կամ հայրը սարի մյուս երեսից էր կանչում:

Տղան փախավ: Տղան կարծես չկար, չգոյությունից գոյանում էր, հետո փախավ: Տղան փախավ երեք անգամ: Հիշում է, որ Կապույտ աղբյուրի լանջով իջնում-իջնում կանգ էր առնում սպիտակ սառն արևի մեջ, ոտքը ձյունից դուրս էր քաշում՝ և սառցակալ կեղևը

քերում էր սրունքը, հետո մյուս ոտքն էր քաշում՝ և ամեն անգամ ձյան կեղևը քերում էր սրունքը, կեղևը կոտրվում էր միայն թաթի տեղով մեկ՝ և ոտքը մինչև դեյրայի փեշը խրվում էր, և տղան ոտքը ետ քաշելիս թաթը սրում ու խոռոչներից սրած էր հանում, բայց միևնույն է, կեղևը սրունքները քերծում էր, և տղան ոտքը փոխելուց առաջ կանգնում ու նայում էր: Հիշում է, որ ձեռքերին փչեց, հետո փեշը բարձրացրեց ու ձեռքերը գոտու տակով աճուկների արանքը խցկեց: Ձեռքերը չէին տաքանում, իսկ աճուկները սառչում էին, և այդ պահին էր, որ տղան հիմարաբար ժպտաց, ծղրտաց ու փախավ:

Տղան կարծում էր դեպի գյուղ է փախել, բայց ուշքի եկավ խոտի բլրի մոտ: Ուրեմն դեռ չէր փախել: Սարսափելի էր, որ դեռ չէր փախել ու նոր էր փախչելու: Սպիտակ, կայծկլտուն լանջով իր հետքը փախչում էր դեպի գյուղ, հետո կեռվում ու գալիս էր այդ ձնաբուրգի մոտ: Տղան պտտվեց բլուրի շուրջը, լաց եղավ ու կանգնեց մնաց: Ներքևի ձմեռանոցները լքված էին, Կապույտ աղբյուրի սև ոլորքը ձյուների մեջ լքված էր, ներքևի ձմեռանոցներից ոչ ոք չէր կանչում. «Այ տղա, այ աղջիկ, էդ ո՞վ ես, էդ ի՞նչ ես»: Հորը խղճալով, գերիներին, արջին, նրան, իրեն խղճալով՝ տղան բլուրի շուրջը մի անգամ էլ պտտվեց, ծկլթոցով հեկեկաց ու փախավ:

Դեպի անտառ զառիվարելուց առաջ՝ տղան դարձյալ կանգնած էր ու ետ էր նայում՝ լանջն ի վար իջնող իր հետքին, լեռան պարապ ուսագծին, ուր վերջին անգամ փողփողաց հոր ձայնը, խոտի ձնաբուրգից եկող իր ճանապարհին՝ որ վերջանում էր իր ոտքերի տակ: Տղան կանգնած էր, արևի մեջ միայն կանգնած էր, ոչինչ չէր անում, չգիտեր ինչ է անելու և չգիտի ինչպես պատահեց, որ խոտի ձնաբուրգի մոտ էր ու հիմա այնտեղ չէ:

Հիմա կանգնած է իրենց դռանը և ճանապարհից ոչինչ չի հիշում: Թերևս՝ միայն արջի հետքը և նրա հետքը և երկու կաթիլ սև արյուն, բայց դա էլ գուցե հոր հետ միասին տեսածն էր: Գյուղի մոտ, Տանձուտ խաղաղ հովտում, տղան մտածեց բոխ անել՝ բոխիներից մանր ճյուղեր ջարդել ու մի շալակ բոխ բերել, բայց դա ողորմություն էր ինքը իրեն, դա խաբեություն էր, և տղան ձեռ քաշեց: Տղան ձեռը թափ տվեց և պարտվածի իր գոյությունը հենց այդպես առանց սքողելու բերեց, աղջկա կարմիր շորը հագին՝ անցընեց Մեղրատան-

ձու բլուրն ու իջեցրեց դեպի իրենց դուռը: Դանելանց արտաքնոցի կածանին մեկը կանգնած նայում էր, թվում էր առավոտից այդպես կանգնած սպասել է: Ձմեռվա ժլատ օրը, աղքատ ժամանակվա նավթի պես, ցամաքում էր, արևն արդեն ճրագթաթ ծմակի ուսին էր, և Մեղրատանձու կաղնեգույն լանջը պայծառ արևի մեջ էր: Տղայի կարմիր դեյրան վառվռալով էր երևում իրենց դռնից, և Դանելա՛նց դռներից, և պապի՛ դռնից, և Քառա՛նց դռներից, և մեծ հորեղբոր ու Շուշան մորքուրենց դռներից... և թող երևա՛ր, տղան իրեն չթաքցրեց ծառերի ետևը և շորը հագից չհանեց: Արևի դեմ հուրհրալով՝ տղան Մեղրատանձու լանջով իջավ, եկավ իրենց դռանը, գոմի ու տան արանքում, կանգ առավ: Պարանը, որ ռուս զինվորի նման ուսպանդ էր արել, հանեց ու շպրտեց գոմի սրահ, դեյրայի փեշերը բարձրացրեց ու գլխով, մի վայրկյան իրեն աղջիկ զգալով ու իրենից զզվելով, հանեց ու խփեց լվացքի լարին՝ որ ձգվում էր տան սյունից գոմի սյուն, և կանգնեց մնաց: Մայրը, աղջնակը, եղբայրը տնից դուրս թափվեցին ու կանգնած նայեցին: Քիվի ամբողջ երկարությամբ՝ ձեղունը հալոցք էր կաթում, արդեն դանդաղել էր, արդեն բարակ սառույցներ էին առաջանում: «Նայեցեք,– մտքում ասաց տղան,– ձեզ համար թատրոն եմ»: Աղջնակի հասակը չէր հասնում և թաթիկները նա գցել էր բազրիքին ու ձգվում էր նայելու:

– Թող չի արել,– ասաց մայրը,– ճամփից ետ է դարձել:

Տղան ուսը ծուլ արավ:

Մոր աչքերը սարսափից չռվեցին:– Խոտը գողացել են,– ասաց մայրը,– լավ չէինք դրել՝ բուքը տարել է:

– Ոչ,– ասաց տղան,– էնտեղ է:

Մայրը ժպտաց.

– Սառնամանիք է եղել՝ կարացել չես շալակ կապես:

Տղան նայեց ճրագթաթ սառը ծմակին:

– Տուն մտեք,– ասաց մայրը,– ցուրտ է, տուն արի:

Տղան չնայեց էլ:

– Ախպորդ թակարդը,– ասաց մայրը,– Շուշան մորքուրի սագը բռնել է, ախպերդ որս է արել, ասում է հայրիկի գալու պատվին եմ արել:– Մայրը ծիծաղեց:

Գլուխը խուզած ու ականջները խոշոր՝ եղբայրը նայում էր դունչը

շան պես թեքած, իր երկու թաթիկի արանքից՝ աղջնակի ճակատն ու աչքերը նայում էին բազրիքի վրայով:

– Բան չկա, անուշ,– ասաց մայրը,– սարի սառնամանիք է եղել: Իսկ թե սագի մասին ես մտածում... խոզը որ մորթենք՝ տեղը չորս կիլո միս ենք տալու, խոզի էրաթաթն իրենցն է:

– Իմ ինչ գործն է,– ուսը ծուլ արավ ու շշնջաց տղան,– տվեք:

– Որ էդպես տնկվելու ու տուն չէիր մտնելու,– կոշտ ու լուրջ ասաց մայրը,– հանդում տնկվեիր: Տուն մտիր,– ասաց մայրը,– ի՞նչ ես ցցվել աչքիս առաջ:

Տղան ուսը ծուլ արավ, բայց հետո տեսավ, որ պիտի պատասխանի: Տղան ասաց.

– Հանդո՛ւմ չեմ ցցվել՝ որ տեսնես քարից չեմ ընկել ու գելն ինձ չի կերել:

Եվ մայրը տեսավ, որ նրան չի կարող խաբել և չի կարող ստիպել: Մայրը երեխաներին տուն արեց, բազրիքի դուռը բացելով ինքը եկավ կանգնեց քիվի տակ, փռան դեմ, խնամքով, հատ առ հատ, հատիկ առ հատիկ դարսած փայտի մոտ, որի ետևում սիրուն մայրիկը նկարի նման էր: Խորանարդի մոտ, որի խորանարդը մոր սիրուն հասակից բարձր էր: Քիվի կաթիլքը արևի մեջ մոր վրայով տորքի հենք էր դառնում, և կաթիլքի մեջ փայտերի կանաչ մորուքները տղան հատուկ խնամքով պահպանել էր, կաթիլքի ետևը մայրը ոտքից ոտք փոխվեց, ձեռքը ձեռքի մեջ և ձեռքերը կրծքերի տակ՝ ոտքից ոտք փոխվեց և տղային խաբելու խայծ չգտավ:– Թույլատրվո՞ւմ է,– արևի մեջ ժպտաց մայրը,– թույլատրվո՞ւմ է քու փետը վառեմ:

Տղան արհամարհեց:

Գիրկը փայտ առնելով՝ մայրն օրհնեց.

– Զորանան սրա բերողի կռները, սրա բերողի կանաչ արևը դալարի:

Տղան չլսելու տվեց:

Բազրիքի դռան միջից մայրը շուռ եկավ.

– Ջուր չունենք, գնա ջուրը:

Ինքը իրեն մերժելով մի շալակ բոխի ողորմությունը՝ տղան ժխտել էր նաև մոր այդ ջուրը,– տղան մեջքը շտկեց ու չպատաս-

խանեց: Դեմքի կեսը արևի մեջ, փայտը գրկին, քիվի տակ մայրը ծիծաղեց ու նորից սկսեց.

– Ախպերդ տանու սագի որս է արել: Ասում է սագից մենակ բա՞րձ են սարքում, թե՞ կարտոլի հետ տապակում էլ են:

Իր պատմության վրա՝ եղբոր ծիծաղելի գլուխը դուրս եկավ դռան արանքից և նայեց ականջները երկար ու դունչը թեքած, աղջնակի քթիկը հպվեց պատուհանի ապակուն:

– Թակարդի մեջ քարշ տալով բերեց, թակարդը բացեցինք թե չէ... տուն արի պատմեմ,– ծիծաղեց մայրը:

Օտար, հեռվից, թշնամանքով, որպես հանցագործը բանտի ճաղերի ետևից, տղան նայեց:

– Վախից երեխան սփրթնել էր, որսն էլ կատաղած ճղճղում էր՝ տիրոջ պես,– ծիծաղեց մայրը:– Խոզը քիչ էր, հիմի էլ սագը: Թակարդը բացեցինք թե չէ՝ մի ոտի վրա թեփռին-թեփռին արավ ու թռավ ախպորդ Շուշան մորքուրի դուռը: Ոտն օդում կախվել էր՝ օրորվում էր, մնաք բարով էր ասում,– ծիծաղեց մայրը:– Էդ մի ոտի դիմաց հիմա խոզի գլուխն իրենցն է, խոզի վրա է, բայց արդեն խոզինը չէ: Իրենց բաժինը թող գան պոկեն տանեն, մեր բաժինը մենք հունվարից հետո ենք մորթելու, ներս արի,– ասաց մայրը:

Տնից տուն՝ այդ կինը կռվի իր բաժինը դեմ առ դեմ Շուշան մորքուրի հետ կռվել վերջացրել էր, հիմա ծիծաղում էր: Երբ համարյա դեռ աղջիկ-աղջնակ էր, աղջկա պես բարակ, նիհար ու վախլուկ այդ կինը երեք-չորս տարի առաջ գիշերը անհետացավ: Երեխաները լվլվում էին, տատը կարծում էր այդ կնոջ մեջ հեռու եզերքների կարոտ ու խելագարություն կար՝ անհայտ կանչերի վրա հիմա վերացել է, պապը չէր կարող ու չէր ուզում որևէ ենթադրություն ու ելք մտածել, որովհետև ծնկների չափ անզոր էր նաև միտքը, և միայն փոքր հորեղբոր հանգիստ, խելացի, երկարուկ դեմքին նայելով էր, որ տղան հասկացավ, թե մայրը գնացել է իրենց կովերի ետևից: Կովերը պահ էին տրված ներքևի տաք ու ասում էին առատ գյուղերում, ասում էին՝ կանա՜չ, ասում էին՝ ապահո՜վ, ասում էին՝ բարի՜... Նիհար, ձողի չափ բարակ այդ կինը մատները բերանն առած պտտվել-պտտվել էր քնած երեխաների վրա և հասկացել, որ կովերի գլխին մեծ աղետ է կախված: Լուսաբացին չէր սպասել, քանի

որ անհնար էր օձիքից ու վզից պոկել կատվի պես կառչող աղջնակին ու փեշը հանել Հրայրի թաթիկներից նույնպես: Ձորագեղ էր հասել մի օրում, կովի հետ ետ էր եկել յոթ օրում: Եկան մեծ հորեղբոր տան զառիվերին դեմ ընկան ու մնացին: Պառաված, ձեռքերն ուռած, ոտքերն ուռած, աչքերի տակը պարկեր՝ այդ կինը չէր կարողանում աղջնակին գրկած պահել, աղջնակը ձեռքերից ընկնում էր: Նիհար, պառավ, ոսկրացած, որբացած այդ կովը ուզում էր մեռնել, և այդ կինը մրմնջում էր խուլ ու անտարբեր՝ ասես երազում. «Քույրիկ ջան, նանի ջան, Աղուն ջան... չէ՞ իմ երեխեքը մեղք են, չէ՞ դու իմ երեխեքի նանն ես, նանի ջան»: «Աղջիկներիդ կորցրել ես,– անուժ, անարցունք, իր ծնկների վրա քնելով՝ լաց էր լինում նա,– սիրուն, նախշուն աղջիկներիդ կորցրել ես, հորթիդ կորցրել ես՝ բողոքելու ուժ չունես, նանի ջան... չէ՞ դու նորից բազմանալու, շատանալու, քու նախրի մեջ թագուհի ես լինելու, Աղուն ջան»: Կովը ծնելու էր և չէր կարողանում: Պապը, թույլ հմուտ, լույսի չափ սպիտակ պապը, որ տղայից, տղայի հորից ու մեծ հորեղբորից էլ առաջ հինգ հարյուր կով էր ծնեցրել, ծաղիկների, մեղուների, ծառերի ու կովերի նահապետ սքանչելի պապը չէր կարողանում ծնեցնել. կովը չէր կարենում օգնել պապին: Թույլ, դեղին աղվամազոտ այդ գարնան մեջ, առվի քարոտ, արևոտ ափին, հրաշք եղավ – կովը ծնեց: Ճակատը ծաղիկ, պոչը ծաղիկ այդ աղջնակը խը՛րտնում ու փախչում էր արևոտ լանջերով, ձորակի շիմշիրին նուրբ, թույլ մի երկու տերև էր կանաչել, և կովը, որ չէր կարողանում ելնել, մայրը, որ ժպտում էր գլուխը ծնկների վրա, և պապը նայում էին հորթի ետևից:

Այդ կինն այն ժամանակ տատին ասավ... Երբ կովը ծննդյան ցավերի ու իր անզորության արանքում նեղվում էր և տատը բերել այգու արևոտ ցանկապատին աղոթքով-մրմունջով մոմ էր վառում և արևոտ ձորալանջն այդպիսով աստծու մատուռ էր դարձել, այդ կինն այն ժամանակ իր ծնկների վրայից նայեց, պարկավոր աչքերը հառեց տատի թիկունքին և ասաց. «Էդ՝ աստվածը ես եմ՝ մոմը ի՞մ ոտքի տակ ես վառում»: Տատը «թու-թու» արեց,– թու, թու, անամոթ,– աստվածային իր աղոթքին իբր չարքի շշունջ էր խառնվում, և նույնիսկ պապը խեթեց աստծու միամիտ նկարի նման... բայց դա

այդպես էր՝ գարնան այդ ձորակի աստվածը այդ կինն էր:

Պատերազմից առաջ՝ տաք, զնգուն, շինարար, առատ ժամանակներում մեղվի երկու փեթակ կապելու դիմաց հորը մի խոզ էին պարտք եղել՝ չնչին մի բան. հայրն ասել էր. «Վռազ չի, կտաք, էլի», ռանդան գրպանն էր գցել, ուրագը գոտին էր խրել ու եկել, մոռացել. կանաչ սովահար անցյալ ամռանը այդ կինը հիշեց հին պարտքը, գնաց խնդրեց-աղաչեց, կռվեց-սպառնաց, թե «ի՞նչ տարբերություն, պարտքը պարտք է, խոզն էլ՝ խոզ», ու ճղավեցնելով բերեց դունչը կարճ ու ականջները կախ այդ խոզը:

Գելը Դանելանց գոմի կտուրը քանդել, գոմն էր մտել ու ամբողջ ոչխարը ջարդել: Պատի անկյունում ախոռի մեջ մնացել էր ծնոտը ջարդած ու բուկը ծակ մի էծ: Գելը նրա դնչից բռնել ու գետնով էր տվել: Դանելանք մորթում էին՝ այդ կինը չթողեց: Ասաց. «Շինելու բան կունենաք՝ մեր ամուսինը կշինի. էծը տվեք մեզ, կսատկի թե կապրի՝ մեր բախտն է»: Չափարի տակ նա ձյունը ետ տվեց, գետինը քանդեց, բանջարի՝ եղնջի արմատները հանեց ու պղնձի մեջ եռացրեց: Եռման ջրով, իր մատները վառելով, նա լվաց վերքերը և ժանիքի տեղը եռման փալաս խցկեց: Նա ինքը չգիտեր ինչ է անում և տղային չկարողացավ բացատրել իր արածի նշանակությունը, բայց էծը կա, չի կարողանում մկկալ, միայն լուռ նայում է, բայց պիտի ծնի:

Գոմի ապահով, օջախի չափ սիրելի կենդանությունը այդ կնոջ շնորհիվ է,– նա կարող է ժպտալ, նա կարող է ծիծաղել, նա կարող է ծաղրել ուրիշների ձախորդությունը,– գոմը կենդանի է նրա շնորհիվ: Իսկ Դանելանց գոմը այդպես էլ հանգավ. դուռը բաց է և ներսում գայլի քանդած տեղով մեկ ձյուն է նստել:

– Խոտը քու պարտականությունը չէր,– և այդ կինը դուռը ծնկով հրեց, երեխաները դուռը ներսից բացեցին:– Դպրոցական ես՝ արի դասերիդ կաց,– դռան միջից շուռ եկավ այդ կինը:

Տղան շտկվեց ու նայեց Ճրագքաթ սառը ծմակին. գյուղը ծածկելով՝ նրա ստվերը եկել հասել էր տղայի ոտքերին:

– Դե որ դու էդ ես՝ մենք էլ էս ենք:– Գրկի փայտը նա շպրտելով թափեց:– Քու փետը մենք չենք վառում, մեզ պետք չի քու փետը:–

Եվ ձեռքերը կրծքերի տակ խաչեց ու կանգնեց:– Ինչքան կանգնես՝ կանգնելու եմ,– ասաց այդ կինը,– կանգնելու եմ:

Դա խաղ էր թե ճշմարտություն, ինչ որ էր, բայց ազնվություն չէր: Այդ կինը կարծում էր միայն ինքն է: Աչքերից կրակ ու արցունք ժայթքելով՝ Արմեն, Արմիկ, Արմենակ, Արմո Մնացականյան անունով պատանին նայեց նրան, զայրույթը տղային խեղդում էր, այնինչ այդ կինը միայն աչքերն էր ճպճպացնում: Ճպճպացրեց-ճպճպացրեց, ձյան մեջ կանգնած հավի նման ոտից ոտ փոխվեց ու ասաց.

– Ի՞նչ է:

Կոկորդի գունդը տղան կուլ տվեց:

– Թե՛ գիտես թե մենակ դու ես,– բողոքեց տղան:

Չոր, թեփուկոտ բերանը կիսաբաց՝ այդ կինը աչքերը թարթեց, գուցե հասկացավ, գուցե ամենևին էլ չհասկացավ, որ ինքը թեկուզ մայրն է, բայց գործ չունի նրա՝ տղայի և տղայի արանքում, կռացավ փայտերը հավաքելու, իսկ փայտերն ախպերիկն արդեն, դուռն ամեն անգամ վախվորած ճռռացնելով, մեկիկ-մեկիկ ներս էր տարել, և այդ կինը նայեց ու ասաց.

– Սատկի՛ր:

Տղային դա դուր եկավ:

Սակայն այդ կինը քիչ հետո եղբոր հետ շոր ղրկեց, որ սա բերի, գցի տղայի ուսերին: Ինչպես որ փոքր ժամանակ տղայի շունն էր՝ երեսը թեք եղբայրը կանգ էր առել տղայի մոտ և չէր հասկանում՝ մոտենա՞ թե չմոտենա, լոշտակ ականջները թափանցիկ՝ այդպես կանգնած էր: Արևը տղայից ու եղբորից անցավ: Տղան եղբորը կարգադրեց տուն գնալ, բայց նա դարձյալ չէր հասկանում՝ մոր պատվե՞րը կատարի թե եղբոր հրահանգը:

Չոր ճայթյուններ էին գալիս: Ճյուղերը կոտրվում էին միանգամից: Չէին ծալվում, մեջներն ասես սառույց էր, հենց ձեռք էին տալիս, ճրթոցով կոտրվում էին: Արևը թռչելու հետ քիվի կաթիլքը միանգամից կտրվեց: Մեղրատանձու լանջին, որով դեպի վեր բարձրանում էր Ճրագթաթ ծմակի սառը ստվերը, ստվերի գալուց առաջ գոլ արևի մեջ բոխ էին անում, ճյուղերի մեջ կյանք չկար, հենց ձեռք էին տալիս՝ փշրվում էին: Տղան լսում էր ճյուղերի ընկնելու ձայնը և ցածր, երազում լսածի, հուշերում պահվածի նման գրեթե

լուռ այն խոսակցությունը, որ կար բոխու վրայինի ու ծառի տակ ճյուղերը հավաքողի միջև: Հայկը, Հովիկը, Նորիկը, Ժորիկը՝ չորսով երեք կով էին պահում – արևը թռչելու հետ սառնամանիքը մեղմելուց առաջ բոխ էին անում, մաքուր ցերեկով չէին կարող, որովհետև միայն արևն ու սառնամանիքը չէին, երրորդն էլ կար՝ միթևանի, չար, միաչքանի անտառապահը: Ո՛չ... մորը խաբել էին, թե Հայկին միայն տասն օրվա օգնական են տանում, հովիվներին պիտի օգնի ոչխարը Քռի հովիտը հասցնեն ու ետ գա, ու չկար, կատակով գուցե ասում էին. «Ճամփեդ բաց է՝ գնա», բայց մենակ ինչպե՞ս գար, գուցե ասում էին. «Դպրոցը քու ինչի՞ն է պետք, Դանելանց Արտեմը քեզ էնքան հեքիաթ պատմի ո՞ր...»: Վերնաշապկի տակ պարկը փորին՝ Հովիկը հիմա, արևի, պահակի ու սառնամանիքի արանքներում, պահպիվում է մարագների մոտերքը, որպեսզի ճիշտ վայրկյանին մոտենա Ճրագթաթի մեծ ստվերի հետ, ծեփվի մարագին ու դռան տակից հարդ դուրս տա: Չյունե մաքուր կածանին նրա պարկից մի ծեղ չի ընկնելու, հայերենի ուսուցչուհին, այդուհանդերձ, դիցական Վահագնի Հարդագողը պատմելիս... որ մեր Վահագն աստվածը ասորեստանցիների Բարշամ աստծու մարագներից վիթխարի քթոցով հարդ է բերում իր եզների համար, քայլերը մեծ-մեծ դնելով դարման է բերում, և նրա հետքը Հարդագողն է՝ ասորական երկնքից ծմակուտյան մեր երկինք... հայերենի ուսուցչուհին, այդուհանդերձ, Հովիկի մազերին է նայելու: Վերևը՝ բոխու վրա և բոխու տակ, ուրեմն Նորիկն ու Ժորիկն էին: Գիտեին, որ չի կարելի խոսել, գիտեին, որ չոր այդ ճայթյունները արդեն ամբողջ գյուղի վրա մի մեծ խոսակցություն են, բայց Նորիկը եթե չխոսեր ու խոսեցներ Ժորիկին՝ ծառի տակ եղբայրը կսառչեր: Կոտրած ճյուղերը նա իր ծառի վրայից ցաքուցրիվ հեռու էր նետում, որպեսզի Ժորիկը հավաքելու վազվզի և չսառչի: Ժորիկը վազում բերում էր ու կույտի կողքին ճագարի պես սառչում մնում:

Ճրագթաթի ստվերը սողալով դանդաղ ելնում էր, վախվորած արևը ստվերի առջև ետ-ետ էր անում դեպի սարերը: Նորիկն ու Ժորիկը դեռ արևի մեջ էին: Արևի մեջ էր մեկ էլ Քառանց բլուրը և նրանից դեսը՝ պապոնց կալի ծայրը: Պապոնց կալը ցածր էր, բայց Ճրագթաթ ծմակուտ լեռան կատարին լուսանցքի չափ կոտրված մի

տեղ կար – արևը խփվել ու բռնկվել էր պապոնց կալի ծերին: Շիտակ մոմի պես ուղիղ՝ արևի մեջ կանգնած էր տատը: Տատի աչքը ճամփի էր: Հալևորը թոռներին առել, գնացել էին խոտի: Հալևորի ծնկներում ուժ չկա, թոռները աղջիկներ ու երեխա են: Կալքարա բարի լանջը նրանց ճամփա՞ կտա, ջուրը ծակած ու խոտը փչացրած, պախրեն ու քամին ցաքուցրա՞ծ չեն լինի: Հալևորի կապած բլուրը ջուր չի մտնի, բայց Խորը բացատը նրանց ճամփա՞ կտա, Կրհորի պատերը բա՞ց կլինեն: Տատն այդպես կանգնած էր կալի լույս բացատում:

Նախ, քան հրեշը... սարսափը... կացիններ ու պարաններ հավաքողը... միաչքանի-միթևանին կերևար և Քառանց բլուրից նրա ստվերը թաղի գլխով կխփվեր Մեղրատանձու լանջին, տղան զգաց, որ նա բլուրի ետևն է, մոտենում է տների անկյուններում պահվելով և հառնելու է միանգամից, խարանը խփելու պես... բայց տղայից էլ առաջ տատը զգաց նրա աներևույթ գոյությունը և, լուսե իր բացատում կանգնած, ոչինչ էլ չարեց, ոչինչ էլ չասաց, բայց ծառի վրա ու ծառի տակ Նորիկն ու Ժորիկը տապ արին իրենք իրենց մեջ: Եվ նրանց պարաննե՛րը տապ արին, և երկու կույտ բո՛խը: Տատի պես՝ այդպես թուխսն է զգուշացնում, այդպես խոսում են ձուկն ու ձկնիկները: Նրանք նրա թոռները չէին, բայց երեխաներ էին, ինքը տատ էր, լավ չէր տեսնում, լավ չէր ջոկում և այդպիսով բոլորն էին նրա թոռները:

– Բա էդ արևն ափսոս չի՞, որ դու մեջը կանգնել ես,– ասաց տատը, սակայն միթևանի-միակնանին դեռ չէր երևում, նրա սև, տափակ, թվում է թիթեղից կտրած կերպարանքը դեռ Քառանց բլուրին չէր:

– Ծառ է, մայիսի հե՜տ կտերևի... բոխի է,– ասաց տատը:– Բա երեխեք են, չէ՞: Ո՞ւր են նրանց հերերը, ո՞ւր ես տարել նրանց հերերին:

Նա չէր նրանց հայրերին տարել, նրան իրեն ուրիշներն էին տարել հին մեծ պատերազմով, թևը կտրել, աչքը հանել, չարացրել ու շպրտել էին գյուղ... բայց տատն այդպես ասաց ու իր կալի լուսավոր բացատում վառվող մոմի չափ շիտակ՝ մոռացավ նրա գոյությունը: Այնինչ, նա արդեն հառնել էր բլուրին, և նրա սարսափն ու ստվերը

ծեփվել էին Մեղրատանձու լանջին, ուր բոխի իր փոքրիկ շալակի ետևում նապաստակի պես տապ էր արել Ժորիկը, և ծառի վրա քարացել էր Նորիկը:

Նա և տղան մի անգամ քիչ էր մնում հանդիպեին: Զառիթափի գլխից սահնակն արդեն թափ էր առնում և թափի սարսռուն հրճվանքն արդեն դողում էր տղայի մեջ՝ զառիթափի տակ ճանապարհի ուղիղ մեջտեղը երևաց նա: Տղան սոսկաց: Այդպես սահնակով էլ թռչելու էին նրա երախը: Կացինը բեռան մեջ էր, հարկավոր էր փրկել կացինը: Զուտ կույրեկույր՝ տղան կառչեց կացնի բնքից ու վզից և ճապաղվեց: Հետո ինքը գլխիվայր ճապաղված էր արահետին, կացինը իր երկու ձեռքին ու դնչի տակ էր, ձնաբուք անելով սահնակը թռչում էր, շունը հաչելով վազում էր սահնակի կողքից: Ապա ինքը ետ անտառ էր վազում, խրեց ու ձյան տակ կորցրեց կացինը, չհավանեց, ետ դարձավ տեղը փոխելու, բայց չգտավ... հետո իրեն խփում ու խփում էր դեպի Երկեն հողերի լանջերը, ուր գաճաճ, շեկ, արևոտ կաղնուտը ձյուն չուներ և հետք չէր բռնի և հեռվից չէր երևացնի, քանի որ տղայի քաթանե շապիկն ու քաթանե շալվարը կաղնեգունված էին կաղնու կեղևով: Տղան այն ժամանակ գյուղ մտավ կալերի կողմից, մարագների մոտ հանդիպեց Հովիկին, ու ախպերացան:

Մայրը սենյակից ելավ, դույլի կանթն արմունկին ու թթվի կանաչ մեծ ափսեն ձեռքին դուրս եկավ պատշգամբից, տղային չտեսնել ձևացնելով քիվի տակով գնաց նկուղ, այնտեղ ափսեի մեջ կաղամբի կես գլուխ թթու դրեց, և տղան լսեց թթվաջրի չռչռոցը, հետո դույլը կարտոլ էր ածում, և տղան լսում էր դույլի ձայները, հետո մառանի դուռը վրա քաշեց ու քիվի տակով եկավ, բազրիքի դուռը ծնկով հրելիս չհամբերեց ու ժպտուն դեմքը տղային դարձրեց, բայց տղան չէր ժպտում, և խռոված աղջկա նման մայրը նույնպես մտավ ինքը իր մեջ: Սենյակի դուռը նրա առջև բացեց եղբայրը՝ հասցնելով թթվի ամանի տակից նայել տղային:

Քառանց բարձր բլուրից արևը թռավ, և անտառապահի սատանայական կերպարանքը տեղնուտեղը չքացավ, բայց նա այնտեղ էր: Փոքրացավ, խամրեց, հատավ նաև պապոնց կալի բացատը, մի

վայրկյան լույսի մեջ էր միայն տատի շարմաղ դեմքը, հետո հանգավ: Տատը երևի ասաց «չեկան, չեն գալիս», ու կարծեց տուն է մտել, թանապուրը խառնում է, բայց խավարի մեջ կանգնած էր կալի ծայրին:

Խուլ, խլացվող, ասես բերանը փալաս էին խցկում, մաշկի տակ ասես ոսկոր էր ջարդվում, ճրթոց էր գալիս. Նորիկը ճյուղերը կոտրում էր բռան մեջ, բայց նրա ափը փափկություն չուներ, և ճրթոցի փոխարեն ամեն անգամ խլանում էր նա ինքը: Գլխարկը պիտի քաշել ու գլխարկի մեջ կոտրել – այսպե՛ս, այսպե՛ս, այսպե՛ս: Կոտրած ճյուղերը պիտի այնպես շպրտել, որ նրանց պոչերը լուռ գետին խրվեն... տղան այդպես կաներ:

– էդ ո՞վ է,– որոտացին Քառանց բլրից,– էդ ո՞ւմ լակոտն է ծառի վրա կկու կտրել:

Մեղրատանձու լանջին թաքուն ծիծաղեցին ու ճրթոցը շարունակվեց. նապաստակն ասես ծառ էր կրծում անընդհատ, հավասար շեշտով, ասես ոչ թե ճրթոց էր, այլ անտառապահի լսողության խաբկանքը, Նորիկը մերկացնում էր բոխին: Չոր, անկենդան այդ բոխը կովերն առաջին օրերին չէին ուտում: Ախոռում կովերի դեմ դարսած՝ ճյուղերը կովերի շնչից տաքանում ու մի քիչ ուռչում էին և կովերն սկսում էին կամաց աղալ: Դուք ձեր խավարի մեջ գոռացեք, եթե հրացան ունեք՝ տրաքացրեք, խլեցեք բոլոր կացինները, ուրագները, ցաքատները, դանակները, պարանները – տղաների մեր բանակը միևնույն է պիտի կով պահի ու կով ծծելով ապրի՛:

Պապի-թոռների քարավանն այդ պահին Խորը բացատից դենը, Կրհորի կապերից էլ դենը, Կալքարա լանջերով-լանջերով, քանի դեռ արևը չէր թռել, գալիս էր: Պապը խոտը ամառն էր հնձել: Հնձել էր մանգաղով, քանի որ գերանդիով չէր կարողացել: Հնձել էր գերանդիով, քանի որ մանգաղով չէր կարողացել: Հնձել էր երկու շաբաթում, ամբողջ ամռանը հնձել էր, բայց դա մշակի մի ժամվա գործ էր: Մշակը մի ոչխար կուտեր ու այդքանը կհնձեր մի ժամում, պապն այնինչ հնձել էր ամբողջ ամռանը... բայց հնձել էր: Իր հոր ու իր հին, փափուկ, փարթամ, մաքուր խոտհարքում, որ Քարուտների տակ էր, բայց քարկտիկի յոթ հատիկ քար չէիր գտնի, պապն անզորությունից

տնքացել էր: Պապն ասել էր. Անդրանի՜կ, Սիմո՜ն, Ակո՜փ... ո՞ւր եք, զորում չեմ:

Երեխաներին չարչարելու դիմաց պապը երկնքից աստծու պատիժ էր սպասել, բայց կապել էր պինդ ու խնամքոտ շալակներ: Պապը Վալոդիկին առաջ էր գցել. ասել էր. գայլերը որ որսի են ելնում՝ առջևից ձյունը ճղած գնում է տղաճուտը, հետո քույրիկները, ետևից պապն է քարշ գալիս: է՜, ասել էր պապը, պարսից շահի քարվանը որ գնում է՝ էլի էդպես է. առջևից քուռակն է գնում, հետո քույրիկներն են գնում, վերջից քարշ է գալիս թույլ, պառավ, սատկելիք ձին... ուղտը: Բա՜, ասել էր պապը, շահի ղայդեն էդ է: Ղայդեն էդ է, ասել էր Վալոդիկը, ղայդեն՝ սովորո՞ւթքը: Սովորութքը, կրկնել էր պապը, թե գիտես թե ես դպրոց չեմ գնացե՞լ.– վեվ՝ Վալոդիկ, հո՝ Հելենա, սե՝ Սոխակ, պե՝ պապի: Էշը թփիցը կապի, ասել էր Վալոդիկը: Էշը քեռիդ ա, պոչը ձեռիդ ա, ասել էր պապը: Ցիծաղելուց հետո Վալոդիկն ասել էր. դե որ էշը քեռիս ա՝ խոտը թող ինքը տանի, ես չեմ շալակում: Այո, ասել էր պապը, թող ինքը տանյե ու մածոնն էլ ինքն ուտյե: Մածոնն էլ ինքն ուտյե, կրկնել էր Վալոդիկը. էշը բա մածուն կուտի՞: Կուտի, կուտի, ասել էր պապը. էդ ոնց է խոտ կշալակի, բայց մածուն չի ուտի:

Բեռան տակ՝ պապը տնքացել էր, բայց Վալոդիկի նվազության վրա չէր արտասվել, քանի որ վշտանալու համար էլ պայմաններ են պետք, և այդ պատճառով էլ վիշտը թող նրանց պատահի, ովքեր վշտանալու պայմաններ ունեն: Պապն ասել էր. գնացեք, է, էդ խի՞ կանգնեցիք: Փայտե երկմատնանի թեթև, ողորկ, վաթսուն տարում ափերի մեջ հղկված եղանը պապը հենել և ուզեցել էր նայի՝ սայթաքել էր, նորից էր հենել՝ դարձյալ սայթաքել էր... փայտե երկմատնանի եղանը, ձեռնափայտի տեղ, պապը հենել, ոտը երեխաների կածանից վերև էր դրել ու նայել շալակների եզրով, ու թքել էր. «Թո՜ւ, թքեմ քու պատվին, ա՛նպատիվ»: Նա դեմքը մորուքի մեջ կորած, մատը բերանին էր տարել՝ սո՜ւսս:

Վալոդիկը հետո ասաց. էն ա ոնց որ հարբած արջ ըլես: Հրայրը վախեցավ ու ասաց. հարբած արջը ո՞նց ա ըլում: Վալոդիկը ասաց. էն ա գլուխն ընկնում ա ոտների արանքը, գնում-գնում գլուխը վրիցը վեր ա ընկնում: Արմենակն ասաց. դու տեսած կա՞ս: Վալո-

դիկի հայացքը ետ գնաց ու ասաց ծը: Արմենակն ասաց. դու տեսել ես, դուք տեսել եք:

Մի գարուն ու մի ամառ հետո՝ աշնանը նրան սպանեցին, բայց պապն ու Վալոդիկը նայեցին իրար ու լռեցին: Սոխակն ամուսնացել ու մոռացել էր, այդ մասին հիշելու էր հետո, երեխաներին հեքիաթ պատմելիս, Հելենան մոր ու հորաքույրերի հետ գործում էր իր հարսանիքի նախշուն գորգը, տղամարդկային այդ լուրերը այլևս նրանը չէին, իսկ պապն ու Վալոդիկը նայեցին իրար ու լռեցին: Նրա համար ամեն անգամ պատժիչ խումբ էր կազմվում ու ցրվում, բայց նրան պատժիչները չէին սպանել. շփերթ՝ շռայլ, ուրախ, խմող, պարող, երեխաներից ու կանանցից չքաշվելով հենց էնպես հայհոյող Մուրադը հրացանով տվել ծառի վրայից գցել էր. ասել էր՝ «ես քու արյունը... բա դու մեղք չե՞ս, որ վախը փորումդ ապրում ես», ու կրակել գցել էր: Ֆերմայի սայլից նա, կինոյի կապկի նման, հեքիաթի մանկագողի նման, ջիլ-պանիր թռցրած՝ ծառի վրա ուտելիս էր եղել, Մուրադն ասել էր. «սարսափը փորումդ» ու խփել գցել էր՝ անալի ջիլն ատամների մեջ: Մուրադին բանտարկեցին: Կարծում էին նրանք շատ են, Մուրադը թաքուն նրանցից մեկն է, նրան սպանել է, որպեսզի նրանց հետքերը թաքցնի: Դատը պարզեց, որ Մուրադը ուրիշների կյանքի նկատմամբ է այդպես շփերթ-շռայլ, բանտային իր օրերի վրա լացը գալիս է... դատն ուրիշ բան չպարզեց:

Այդ նույն աշնանը պապը ձի առավ՝ դսեղեցի անտառապահ Ալխոյենց Ադամի կոդակ, պինդ, բարի, մուգ կարմիր ձին, որը վարգեցնելուց նեղանում էր, իսկ անտառապահի պաշտոնը գոռոզ սլացք էր ուզում Ծմակուտից Դսեղ ու Դսեղից կենտրոն: Արմիկն ասաց. անունը ի՞նչ է: Ձի է, ասաց պապը, անունը Ձի է, ինքը պիտի աշխատի, Վալոդիկն ու Արմիկը սովորեն: Վալոդիկը զարմացավ հենց պապի նման. վուե՜յ... անունն էն ա Ալխո ա, էլի, Ալխո:

Դարձյալ մի քիչ՝ և ռումին գերիներին Հովհաննես Թումանյանի անտառներից հանեցին, արձակեցին, և նրանցից ավելի հայրն ազատվեց: Ալխո ձիու հետ հայրը գնաց Քռի թուրքերում աշխատեց, մի բեռ ցորեն ու գարի բերեց: Թաղից հացի հոտ եկավ: Մի քիչ էլ, մի քիչ էլ՝ և մեծ հորեղբայրը վերադարձավ անհայտություններից, ոչինչ չպատմեց անհայտությունների մասին, և Մնացականյան մեր թաղում պա-

տերազմի հետքն ու հոտն էլ չկար: Մեղրատանձու լանջին գառներ էին խաղում, ուլիկը քար էր գտել ու վրան կանգնել, Դսեղի հորաքույրը երեխաների հետ եկել էր իր աղջկության լանջերը, փոքր հորեղբայրը նամակ ու լուսանկար էր ղրկել և բանակայնորեն լուրջ ու մնացա-կանյանորեն սիրելի էր... մաքուր, հստակ գարուն էր, և մեծ հորեղբոր Վալոդիկը պատմեց:

Արջը գալիս-գալիս ու գլուխը վեր էր գցում, գալիս-գալիս ու արջի գլուխը կախվում էր: Փախստականը մոտենում էր խոցելու՝ արջը գռմռում ու սվինը կրծում էր: Արջը գնում-գնում ու գլուխը գցում էր: Այդ-պես՝ որ խոցի ու որ սվինը կրծի՝ պապի-թոռների դեմ մի անգամ էր եղել, բայց պարզ էր, որ խայտառակ այդ ճանապարհը նա անցել էր այդպես. արջը անընդհատ ետ էր դարձել նրան սպանելու՝ նա սարսափից մեռել ու սվինի ծայրով մի քիչ ճանկռել էր արջի լնդերը, բայց նրա հզոր կարաբինը չէր որոտացել, քանի որ... որոտա ի՞նչ ասի... ասի այստե՞ղ է սողում փախստականի նրա խեղճ գոյությունը: Պատժիչ ջոկատի սարսափի և արջի սարսափի արանքում՝ նա որոտալու իրավունք չուներ: Խորովածի նրա կրակը չէր հուրհրալու, արդար հաղթանակի նրա ծուխը սյուն չէր խփվելու դեպի երկինք – արջի միսը նա լափելու էր հում-հում և փորի ցավերից գալարվելու էր լուռ: Նա ձյուն ուտելիս էր եղել, մատը դրել էր բերանին՝ այսինքն թե սուս, ինձ չեք տեսել, այսինքն թե՝ ես չկամ: Լանջնիվեր՝ պապը նայել էր նրա արյունոտ ճանապարհին, այսինքն թե՝ բա էդ ճանապա՞րհդ, որ Չալքարա կաղնուտներից բաց սարերով գալիս գնում է Քոշաքար: Նա աչքերը երկնքին էր դարձրել, այսինքն թե՝ գուցե ձյուն գա ծածկի մեր խայտառակ ճանապարհը: Արջը գնում-գնում բերանով մեկ ձյուն էր առնում – փախստականը բռան մեջ ծծում էր ձնագունդը:

Պապն ասել էր. կյանքի հազար ղայդա կա, հազար ղայդի կյանք կա, նրա ղայդեն էլ էդ է: Բաց, ազատ՝ աղբյուրը երգում է, ամպը տրաքում է, լեռների արանքից քամին փախս է ընկնում ու կռացնում ծառերը, դարավոր կաղնին չի ամաչում ու իր վրա հառաչելով է կոր-ծանվում... Վալոդիկն ասել էր. վուա՜յ, էդ հո զուռնա չի՝ որ ղայդա ունենա, ղայդեն բա նվագը չի՞: Պապն ասել էր. զուռնա է, բարձր, զիլ, ուրախ՝ նվագում է, բայց նրա զուռնան չի նվագելու, չի ծղրտա-լու, չի խաղալու:

Նրանց հոգնած քարավանը եկավ, խոտի թույլ շրշյունով եկավ, և մեկ էլ լսվում էր, թե ինչպես է բախվում պապի փայտե եղանը, խո-տը լուռ, որպեսզի կովերը գոմում չլսեն խոտի ձայնն ու կերի չսպասեն, տեղավորեց գոմի ծեղունում, և խավարի մեջ չերևաց՝ շա՞տ է այդ խոտը թե քիչ, մե՞ծ էր այդ տառապանքը թե փոքր, և տատի-պապի աստվածը խավարի մեջ չտեսավ, որ պապը աղջիկ-թոռներին բար-ձել էր, պարանը նրանց ուսերը կտրտել է, ինչքան էլ խոտ են դրել պարանի տակ՝ շալակը դարձյալ քաշել ու թոկերը մտցրել է աղջկա նրանց մաշկի մեջ, կսմթել, քերծել, հարել, ծամծմել ու ջարդել է նրանց ուսերը, իսկ պապենական խոսքն ասում է. աղջիկը հորանց տանը եթե արև տեսավ՝ տեսավ, թե չէ՝ ամուսնու տանը նա կյանք չունի:

Խոտի շալակը բոխի շալակից լավ է. փափուկ է, միայն պարան-ներն են ցավեցնում, և եթե խոտի մեջ կռատուկ կա՝ կռատուկի չոր, ուղղակի մետաղյա միջուկը, բայց պապի հնձած խոտի մեջ փուշ ու կռատուկ չէին լինի: Հետո՝ մեջքդ տաք է պահում: Բոխի շալակը քո մեջքից ինքը գուցե մի քիչ տաքանում է, բայց մեջքդ չի տաքացնում: Սառը և քո նիհար կողերի պես չոր բոխի շալակը մեջքդ անընդհատ հարում է, երեխայի ճկուն ինչ-որ հնարքով դու քո ողը փախցնում ես ոստի տակից, բայց ոստը գտնում է քո ողը: Դու մեծ ես, ոչինչ, դու տասնմեկ տարեկան ես, Ժորիկի շալակը եթե կարողացել ես այն-պես կապել, որ ոստերը դուրս չեն ցցվել ու երեխայի մեջքը հիմա չեն կրծում, դու ինքդ՝ ոչինչ, դու մեծ ես:

Խավարը դանդաղ ետ տանելով՝ Նորիկն ու Ժորիկը հիմա բոխը տուն էին հասցնում: Վառարանն արդեն սառել էր, ոչ ոք նրանց չէր գովելու, նրանց մատները ոչ ոք չէր պաչելու. մայրիկը հիվանդա-նոցում էր, Հովիկը՝ մարագների ճանապարհին, Հայկը՝ Քռի թուրքե-րում:

Դույլը ձեռքին՝ Հրայրը ելավ տնից. դուռը բացվելու հետ խորո-ված կարտոլի հոտը դուրս խփվեց. Հրայրը եկավ կանգնեց տղայի մոտ ու խնդրեց նրա գլխարկը, և երբ հեռանում էր աղբյուրի ճանա-պարհով՝ տղան տեսավ, որ նա իրեն կարտոլ է տվել: Տղան կար-տոլը նրա ետևից շպրտեց, կարտոլը կպավ նրա թիկունքին թե չկպավ, բայց նա հանկարծ բղավեց ու դույլը շխկշխկացնելով

վազեց: Այդպես անընդհատ բղավելով նա հասնելու է աղբյուր և ձենը գլուխը գցած մնալու է մինչև դույլը լցվի, վերադարձին նույնպես երբեմն գոռալու է: Նա ասում է, թե վախից չի գոռում, ցուրտը փախցնելու համար է գոռգոռում: Ճանապարհին նա հատուկ իր տեղերն ունի, դույլը գետնին է դնում, բղավում, դույլը հիմա էլ մյուս ձեռքով է բռնում, և ազատված ձեռքը վեր է թռչում, դույլը նա բերում է ծալվելով-ծալվելով, բայց միշտ ինքն է ջրի գնում, մանավանդ, երբ այդ ջուրը հայրն է խմելու:

Լամպը վառվեց, և աղջնակը կպած էր լուսամուտին: Լամպը վառվելու հետ նա տղային կորցրեց և ապակու վրայով սկսեց փնտրել: Ապակին քրտնած էր, ձեռիկը քսմսելով նա սրբում ու քթիկը հպում էր, բայց նրա շնչից ապակին նորից էր պղտորվում:

Եղբայրը վերադարձավ, դույլը պատշգամբում դրեց և գլխարկը ետ բերեց: Տղան գլխարկը չուզեց, բայց եղբայրը մտածեց, որ կարելի է միանգամից տղայի գլխին դնել: Տղան գլխարկը գետնին խփեց: Եղբայրը գետնից վերցրեց գլխարկը և նայեց շան պես գլուխը թեքած:

Լամպի լույսը պայծառացավ, և նրանք երկուսն էլ հասկացան, որ հայրիկը գալիս է: Գլխարկը հիմա տղայի ձեռքին էր, եղբայրը տուն էր մտնում... բայց մորից, տղայից, եղբորից ու աղջնակից շուտ՝ հոր ներկայությունն զգացել էր Շուշան մորքուրը: «Իհի՜,– անիծեց նա,– ով իմ թռչունի ոտը կոտրել է՝ թող, թող, թող նրա...»: Նա լռեց ու ականջ դրեց: Նա դեռ միայն հետախուզում էր. իրենց դռնից Մեղրատանձու լանջը՝ նա տղամարդու զանգվածն զգում էր, բայց այնքան էլ վստահ չէր, թե այնտեղ արդեն տղամարդ կա: «Ախչի,– գանգատվեց նա,– տվել որձակիս ոտը կոտրել ու ծիծաղում են, ասում են տապակեք կերեք, տուր մեզ ուտենք, ասում են»: Դրսերում ոչ մի «ախչի» էլ չկար, նա այդպես տղայի հորն էր պատմում, լանջից լանջ՝ նա տղայի հորից որևէ խոսք էր ուզում: «Խլացել են,– ասաց նա,– չեն լսում, հետները խոսողը մարդ չի՝ անտեր կնիկ է, արհամարհում են»:

Հայրը չէր խոսում. այդ որբևայրի գյուղում՝ չէր կարելի լինել, առավել՝ լինել և ասել «ես կամ»: Դեռ շատ տարիներ են անցնելու, մինչև հայրը հասկանա, որ որբ այդ երեխաների հայրերին, այրի այդ

կանանց ամուսիններին՝ իր ընկերներին, ինքը չի զոհել և չամաչի իր ողջության համար:

«Չկան,– խելագարվեց Շուշան մորքուրը,– չիք են կտրել չքացել, խլացել են՝ չեն լսում»:

Մայրն ըստ երևույթին մյուս կողմի լուսամուտը բացել և ուզում էր պատասխանել: Չպատասխանեց. լուռ՝ լուսամուտի փեղկը վրա դրեց:

«Իիի՜, լռվեք դուք,– անիծեց Շուշան մորքուրը,– էդպես բանտի պես վախենաք դուրս նայեք, վախենաք մարդու ձեն լսեք, ձեր բախտավորությունը վախենաք ցույց տաք»:

«Ի՛նչ է, ախչի,– լուսամուտը բացեց ու սաստեց մայրը,– ձենդ ի՛նչ ես գլուխդ գցել, ի՛նչ ես խելագարվում»:

«Քաշվիր տունդ,– ասաց Շուշան մորքուրը,– դուռդ վրադ փակիր ու վայելիր, բախտավո՜ր. կրակդ վառ, երեխեքդ՝ լրիվ, մարդդ՝ գլխիդ – անբախտների մասին դու խի՞ պիտի մտածես»:

«Համեցիր», ասաց մայրը:

Իր բախտին ու բեռանը հնազանդ որպես բեռնաձի, որ միայն իր տիրոջ տան արահետը գիտի, որպես խուլ խոփ, որ հողի մեջ խեղդվում է, որպես եզան պարանոց լծի ու սամիների նեղվածքում, այդ կանանց կռվի միջով հայրը եկավ, անցըրեց տարավ իր շալակը, մտցրեց գոմի սրահ ու նստեց: Այդպես լուռ նստած էր, չէր թափահարվում ու պարանների նեղվածքից դուրս չէր գալիս, լուռ ու խուլ այդպես նստած էր:

Մայրը տնից ելավ ու պատշգամբում սպասեց ջուրն ու սրբիչը ձեռքին, բայց գոմի սրահից նա դուրս չէր գալիս, նա, թվում է, մարդ չէր, այլ ձի՝ որ բեռը տեղ է հասցրել ու հնազանդ սպասում է իջեցնեն:

Պատշգամբում մայրը տեղում անհամբեր շարժվեց, բայց շարունակեց սպասել: Քրտնած ապակու ետևը, դեղին լույսի մեջ աղջնակի դեմքը վանքի հին որմնապատկերի չափ անշարժ էր: Դեղին լուսամուտի մեջ եղբոր աղոտ դեմքը միացավ աղջնակի գլխին:

Մայրն արդեն անհանգստացավ: Թվում էր՝ խաբկանք է, թվում էր՝ հայրը չի եկել: Աննշան, չշարժվելու պես, ինչպես ծվարած հավքն է

շտկում թևը, մայրը տեղում շարժվեց ու ասաց, կարծես թե չասաց, կարծես մտածեց. հայրիկ: Ապակու վրայով գոլորշու պաղած կաթիլներ էին գլորվում, թվում էր աղջնակը արտասվում է:

Եվ այդ ժամանակ խոտը գոմի սրահում շրշաց. հայրը մի ուսը պարանի միջից հանեց: Սպասեց, մոռացավ, հիշեց, նորից հիշեց ու նորից մոռացավ հանել մյուս թևը: Դարձյալ այդպես նստած էր:

Տղան լսեց «հայրիկ» և չհասկացավ՝ դա իր սրտի կա՞նչն էր, թե մոր ձայնը: Տղան լաց եղավ: Տղան նույնիսկ չհեկեկաց ու նույնիսկ չֆսֆսաց – տղան լուռ լաց եղավ: Տղան լաց էր լինում ու հիշում իրենց վերելքը. հայրը գնում էր, և ինքը գնում էր. հայրը ոտքով ձյուն շպրտեց դեպի բաց գետինը. հայրն ու ինքը միասին ծիծաղեցին ծծկեր միթևանու վրա. հայրը բոխին այնպես հատեց, որ բոխին առանց ցնցվելու կանգնած մնաց. հավասար եղբոր պես ինքն ու հայրը փախստականի հետքին միասին էին հակվել. հետո քամին ծեծում, ուղղակի պատառոտում էր հոր բաճկոնի փեշերը, իսկ իր կարմիր կերպարանքը արևի մեջ կանգնած էր սպիտակ լանջին: Տղան արժանի չէր կրելու այդ պատկերները, դրանք տղայի պատկերները չէին, արդարն այն կլիներ, որ տղան քայլ առ քայլ հոլովեր իր փախուստը, բայց նրա էությունը փախուստից ոչինչ չէր վերցրել, տղան չէր կարողանում անդրադառնալ փախուստին:

Տաքություն, քրտինք ու ծաղիկ բուրելով հայրն անցավ դեպի դուռը, չոր խոտի, քրտինքի ու ջերմության քաղցր մշուշը քսվեց տղայի դեմքին: Դրանք տղայի բույրերը չէին, տղան այդ բույրերին արժանի չէր, նա շունչը պահեց, որպեսզի իր մեջ չառնի այդ ծանր քաղցր մշուշը:

Մայրը պատշգամբի դռնակը նրա առջև բացեց, բայց նրա զանգվածը կանգնել էր ու պատշգամբ չէր մտնում: Նա դանդաղ, զոռով, ասես եզան պարանոց էր ոլորում, ասես կաղնի էր ճկում, թևերը ետ ոլորեց ու փորձեց հանել բաճկոնը: Նա մոռացավ կամ չկարողացավ– բաճկոնը նրա վրայից մայրը հանեց, և նույնիսկ մայրը դժվար հանեց. բաճկոնը նրա թիկունքին ծեփվել էր, մայրն ուղղակի պլոկեց բաճկոնը:

Բազրիքի վրայից նա վերցրեց լվացվելու ջուրը, մոր ձեռքերը օդում մնացին, և սկսեց խմել: Նրա բույրը կանգնած էր տան դռնից

մինչև գոմի սրահը և գոմի սրահից մինչև՞... և այդպես մի շաբաթ մնալու էր այդ բույրը, իսկ նա, մոր արգելքի դեմ կույր ու խուլ, ծծում էր լվացվելու ջուրը, և տղան չկարողացավ հեկեկոցը զսպել:

Նա հիմա այնտեղ լվացվում էր, մայրը նրա ձեռներին ջուր էր ածում, տղան մտովի տեսնում էր ոստոտ նրա մատները. այդ մատները ջուրը չէին պահում, ջուրը մատների արանքից թափվում էր, և խոնավ ձեռները հայրն առանց ջրի էր քսում պարանոցին ու դեմքին:

Հիմա սրբվում էր, դանդաղ քսելով՝ սրբիչն իջեցնում էր դեմքն ի վար, իսկ մայրը ծնկած ավլում էր նրա ոտքերը, կեչի ավելով ու մատներով պոկոտում էր ձյունները նրա գուլպաների ճտքերից, ուզում էր արձակել բանակային նրա կոշիկների քուղերը, այնինչ նա հազիվ թե զգում էր, որ իր ճտքերը մաքրում ու քուղերն արձակում են. նա ոտքերը լայն դրել ու ինքը իրեն մոռացել էր:

Ներս մտնելուց առաջ, դռան տակ, նրանք հիմա քչփչում էին, այդ կինը քչփչում ու կարծում էր հոգնության խուլ թաղիքների մեջ կորած այդ մարդը հիմա կարող է այդքան ցածր ձայներ լսել: Նրա ուշադրությունը այդ կինը թերևս հրելով տղային դարձրեց, բայց հայրը դարձյալ չհասկացավ, թե նա իրենից ինչ է ուզում, այդ կինը նորից քչփչաց ու կարծես ծիծաղեց:

Այդ քչփչոցը միայն տղայի մասին էր, այդ մշակի բերանով տղային տուն կանչելու մասին էր մոր քչփչոցը, տղայի հպարտությունը այդ կնոջ համար ոչինչ էր, չկար, ծանր այդ մշակի հաղթած գոյությունը այդ կինն ուղարկում էր տրորելու տղայի փոքրիկ հպարտությունը, և տղան ատեց այդ կնոջ դավադիր քչփչոցն ու ծիծաղը: «Ականջը մտած քչփչա՛, քչփչա՛,– ուռավ տղան.– թե գիտես թե մենակ դու ես»:

Մի ոտը շեմին՝ հայրը կանգնած էր դռան մեջ, հոր թիկունքից գոլորշի էր ելնում: Տղայի բախտից՝ հայրն այդ կնոջը չհասկացավ: Եթե հասկանար ու գար, տղային մի թեթև դեպի տուն հրեր, կամ եթե նույնիսկ չհասներ տղային, այլ ոտքը շեմքից միայն ետ բերեր՝ տղան տուն կգնար ու կատեր հորը, մտքում՝ տղան արդեն ենթարկվել ու ատում էր այդ մարդուն, նրա ծանր ներկայությունը, որը եզան ոտի պես հիմա-հիմա գետնի տակ էր մղելու տղայի հպարտության նվազ ծիլը... բայց տղայի բախտը բերեց. հոր թիկունքից

գոլորշի էր ելնում, հետո հայրը տուն մտավ:

– Հերդ կանչում է,– ասաց մայրը:

Տղան պատասխանեց.

– Կանչում է՝ դու էլ գնա:

– Քեզ է կանչում,– ասաց մայրը:

– Չի կանչում,– ասաց տղան,– գնա կանչել տուր:

Այդ կինը լռում էր. նա գուցե զղջում էր դավադրության համար, գուցեև չէր հասկանում, որ քիչ առաջ ինքը վատ բանի էր, հետո բողոքեց.

– Բա ես ի՞նչ անեմ, որ դու գրագետ ես, ես՝ անգրագետ:

– Կովը քշիր Չորագեղ ու էնտեղից ետ բեր,– ասաց տղան:

Աղջնակի դեմքը նորից հայտնվեց ապակու ետևում:

– Հիմի՝ էդպես ինչքա՞ն ես կանգնելու,– ասաց մայրը:

Տղան որոշեց չլսել, խլանալ ու չլսել:

– Մինչև ե՞րբ ես կանգնելու, ասա իմանամ,– ասաց մայրը:

Տղան չպատասխանեց:

– Որ թոքախտ ընկնես՝ ես ի՞նչ եմ անելու,– ասաց մայրը:

Տղան ետ-ետ արեց. ետուետ՝ տղան հեռացավ, բայց այդ կնոջ ձայնը դեռ գալիս էր, այդ կինը ներս չէր գնում:

– Բոլորը, բոլորը, բոլորը, դեյրայից սկսած բոլորը քո պատ-ճառով,– ասաց տղան:

– Սատկիր,– ասաց այդ կինը, բայց նա միևնույն է ներս չէր գնում: Պատշգամբի դռնակը բացելով նա առաջ եկավ, մոլորված կանգ առավ, ոտքը դարձյալ առաջ գցեց, և այդ ժամանակ տղան ասաց.

– Կթողնեմ էստեղից կգնամ:

– Խոտ բերելը քու գործը չէր,– ասաց մայրը:

– Իմ գործն էր:

– Մի մատը երեխա ես,– ասաց այդ կինը,– քու գործը չէր:

– Հա՜,– պայթեց տղան,– էն մարդը ձեր մշակն է, գնացեք կերեք:

– Ուրիշների պես թող աֆերիստ լինի՝ չչարչարվի, ես մեղավոր չեմ, ներս արի,– զայրացավ այդ կինը, սակայն տղային փրկեցին:

Շուշան մորքուրը տղային փրկեց: Տան անկյունից նա հայտնվեց միանգամից: Երևում էր, որ կանգնած ականջ է պահել մորուորդու

վեճին, հասկացել է, որ տղամարդավոր այս ընտանիքում էլ ցավեր կան, և ուրախ է այդ խեղճության համար:

– Անուշ ջան,– խնդրելու պես ասաց նա,– անուշ, ձեր որսը ձեզ եմ տալիս: Փետել, մաքրել, բերել եմ: Խոզից կտաք՝ կտաք, չեք տա՝ դուք ու ձեր խիղճը, չնայած դուք խիղճ չունեք:

Բայց նրա հոգսը սագը չէր. եթե սագը լիներ՝ կտար ու դռնից էլ ետ կգնար. նա ուզում էր տղայի հորը տեսնել. նրա ամուսինը տղայի հոր ընկերն էր եղել, հին մի երեկոյի մեջ նրանք կողք-կողքի կանգնած էին եղել չափարի տակ, հոգնած զրուցել էին ամեն մեկն իր տուն գնալուց առաջ, ամուսնուն սպասելով՝ իրենց դռնից Շուշան մորքուրը նրանց ձայնը լսել ու խոսքը չէր լսել, նա հիմա կարոտել էր հին ամռան հոգնած, փոշոտ, տաք այն երեկոյին, նա ուզում էր տուն մտնել ու հասկանալ, թե այդ ինչ եղավ, որ ամուսինն ահա կար ու ահա չկա: Երեկոյի մասին նա չէր խոսելու, չէր խնդրելու նաև իրենց ջարդված դռան մասին, տղայի հորը նույնիսկ մի կարգին չէր նայելու և նույնիսկ դեպի հոր թախտը չէր նայելու. նա կարկամելու, փոքրիկ աղջկա պես գլուխը կախելու ու դռան տակից առաջ չէր գնալու, և վառարանի մոտից ու պատուհանի տակից նրան նայելու էին աղջնակն ու Հրայրը: Նա այդպես մի քիչ կանգնելու էր, տղայի հորը չէր տեսնելու, հոր բառերից ոչինչ չէր հասկանալու, թերևս նրա շունչն էր մի քիչ զգալու և մի քիչ էլ նրա բույրերից էր առնելու իր կարկամած ռունգները, և հանկարծ դուրս էր գալու լացակումած, այդ տանը կարծես մեկը նրան նեղացրեց: Իսկ հիմա կանգնած էր բազրիքի դռան մոտ և այդ տուն մտնելու թույլտվություն էր ողորմում տղայի բախտավոր մորից:

Մայրը նրան զոռով ներս տարավ, նա իբր չէր ուզում: Աղջնակի դեմքը հեռացավ պատուհանի դեղին ապակուց, Դանելանց տներում երեխա դուրս բերին փիշիկի և ոգևորեցին, թե նա քաջ է, նրա միայն ձայնից գայլերն ու արջերը իրենց որջերում տապ են անում, նա թող գոռա... և նրա սուր ծղրտոցը դիպավ Ճրագթաթ անտառին ու ետ եկավ, հետո երկնքի լուռ աստղերն ու տղան էին:

Գոմից տաք խռպոց էր գալիս, աղջնակի դեմքը մոտեցավ ապակուն, Ճրագթաթից դենը մի աստղ ծորաց, հետո մենակ տղան էր:

Շուշան մորքուրը տնից դուրս նետվեց կրակվածի պես, մոռացել

էր, որ տղան դրսում է, արհամարհեց տղայի հորը. «Հողեմ բախտավոր գլուխդ, ասում է մարդ ունեմ, ավերակ էլ չի ասում՝ տղամարդ», շտապ-շտապ գնաց, ձյունը նրա քայլերի տակ խրթխրթում էր, մտավ ձորը և, մինչև կհասներ իրենց տուն, արդեն կարոտեց տղայի հորը. «Հողեմ ապահով գլուխդ»:

Լուսամուտը մի վայրկյան ավելի դեղնեց. մայրն ուրեմն տաշտակի մեջ տաք ջուր լցրեց հոր ոտքերի համար, և գոլորշին բռնեց լուսամուտը: Աղջնակն ապակու ետևը չէր. թախտից թերևս իջել էր ու պտտվում էր տաշտակի շուրջը – մայրը գուցե խղճա ու թույլ տա հոր ոտքերն ինքը լվանա: Այրի կանայք գալիս են այդ տղամարդուն նայելու, տանը բոլորն ուզում են այդ տղամարդու ոտքերը տաք ջրով տրորել, ձմեռանոցի կանայք նրա շուրջը պտտվել և ափսոսանքով են տեսել, որ դուռը նա արդեն սարքեց, արդեն կախում է, հիմա գնալու է:

Նրա ոտքերի ջուրը մայրը դուրս բերեց, շփփոցով թափեց ու լուռ ետ գնաց: Աղջնակի դեմքը դարձյալ հպվեց լուսամուտին: Լուսամուտը նորից դեղնեց. սեղանի կենտրոնում՝ կլպած, աղով խաշած կարտոլը շուռ տվեցին կանաչ մեծ թասի մեջ, նրա գոլորշին լիզեց լուսամուտի ապակիները, վրան չոր ուրց արեցին: Հրայրը հիմա աչք է դրել մեջտեղի փուխր, համարյա թե փլված կարտոլին, բայց սպասում է հայրիկը վերցնի: Հայրիկը եթե չվերցնի՝ Հրայրը չի վերցնելու, քանի որ կարծելու է հայրիկը հատուկ իր համար թողեց: Այդպես միմյանց համար թողնելով՝ այդ կարտոլը ոչ ոք չի ուտելու:

Ճրագթաթից դենը հեռու ձորերում թե տղայի ներսում՝ գայլը վայեց իր քաղցի ու մենակության մասին, վայեց երկար ու աղիողորմ: Լռեց, սպասեց ու նորից ոռնաց սառն ամայությունների վրա: Նա չէր քաշվում, սոված մենակի իր կանչը սառն ամայությունների վրայով նա հղում էր իր նման քաղցած մենակներին: Հետո Քոշաքարի լեռներից Ճրագթաթ ու Ճրագթաթից Ղազախ՝ շրխկալու էր քաղցած մենակների նրանց հզոր միությունը... աուուուուո՜ւ, մտքում պատասխանեց տղան, քանի որ գիտեր, որ նա, միևնույն է, անպատասխան չի մնալու, նրան արդեն որևէ տեղից պատասխանում են, աուուուուո՜ւ...

Կաթնծիրի տակ այս պառավ, հոգնած երկիրը սառնամանիքից

ճաքեր էր տալիս, բայց ոչ մի արարած անուղի որևէ անհայտությունում լքված չէր. բոլորի հանդեպ բոլորն իրենց պարտքերը կատարել էին և փոքրիկ օջախներում հիմա փայփայում էին իրենց փոքրիկ դաշինքները:

Լուսամուտը սառչում էր. աղջնակի փոքրիկ շունչը, հորից ու մորից իբր թաքուն, հիմա չէր զորում հալել պնդացող սառույցը, թաթիկը քսելով՝ սառույցի պղտոր սվաղը հիմա չէր պարզվում, ապակու վրա մնացել էր նրա աչքի չափ մի տեղ՝ որ փոքրանում ու փոքրանում էր, պղտորվում ու պղտորվում էր, և նրա ցուցամատի եղունգն այլևս, մայրիկից իբր թաքուն, չէր քերում, դժվար էր քերում սառույցի սվաղը: Դրսի մթնից ամեն անգամ նրա աչքին պղտոր մի աչք էր մոտենում, և վախից նա ամեն անգամ հազիվ չէր ճչում, հազիվ էր հավատում, որ դա իր աչքն է, ու նույն պահին էլ մոռանում էր:

Տղային նա խանգարում էր: Տղան, տղայի միտքը, տղայի նիհար մեջքը վաղուց գիտեին, որ տղան կախարդվածի պես քաշվելու, ինքը իրենից աննկատ գնալու, հայտնվելու է գոմի սրահում, հոր բեռան կողքին, մեջքը դեմ արած ծվարելու է հոր ջերմության մեջ: Մտքով՝ տղան արդեն գնացել էր, սեղմվել էր հոր տաք շալակին, բայց աղջնակը թույլ չէր տալիս իրոք գնալ, տղան իրեն այդտեղ աղջնակի համար էր պահում:

Կյանքը իրենը արեց: Իրեն խաբելով, թե քրոջ աչքի տեղը ապակու վրա հիմա, միևնույն է, սառցակալել է, և կրկին համոզելով, թե, միևնույն է, սառցակալել է, ու քույրիկն իրեն չի տեսնում, և դարձյալ խաբելով ու չխաբվելով, համոզելով, համոզվելով, բայց չգնալով... տղան վերջ ի վերջո մոռացավ աղջնակին էլ, իրեն էլ: Տղան տեսավ, որ ինքը սրահի շեմքին է, իր ծունկն ու ձեռքը հրում են սրահի դուռը: Մետաղե կեռը ագուցած չէր, կեռը եթե կոճկած լիներ՝ տղան գուցե մի հավիտենություն էլ այդտեղ կանգներ, բայց ծանր ճռռալով, ճռռոցը կոտորակելով՝ դուռը բացվեց... ճռճռոցը տանը թող լսեին ու հանգստանային:

Ոտքը մթի մեջ դիպավ իր սահնակին: «Դե դու էլ կորի», տղան ոտքով դեն հրեց սահնակը: Հետո տղան կանգնած էր բեռան կողքին, սեղմվում էր բեռանը և նրանից ջերմություն էր ուզում: Տղան

ուշ հասկացավ, որ բեռը վաղուց է տաք եղել, հոր քրտինքը խոտի մեջ հիմա սառել է: Տղան տեսավ, որ խոտի շուրջը ինքը պտտվում է, ծվարի տեղ է փնտրում և հեկեկում առանց արտասուքի, բայց իր ուշքը գոմն է: «Ձե՛նդ, ձե՛նդ, ձե՛նդ,– իրեն հրահանգեց տղան,– ձենդ կտրի՛ր»:

Գոմի տաքությունը խփվեց նրա դեմքին, և նա հասկացավ, որ գոմն է մտնում: «Թե մարդ ես՝ մի մտիր», բայց մտավ, ոտից գլուխ փաթաթվեց գոմի տաքության մեջ: Մտքով՝ նա դեռ դրսում էր: «Չես տալիս՝ մի տուր», ասաց նա, և դա խոտի բեռան հետ էր խոսում:

Միջնորմի վրայով նայեցին այծի լուռ աչքերը, իր ճարպերի, կշտության ու նիրհի միջից խոզը գոհ խռկաց: Խոզն, այո, դեռ կար. երևանցի աշխույժ խաբեբան, որ խաբում, շրթունքները լպստում և ուրախ ժպտում էր, դեռ չէր հայտնվել ու խաբել, թե ինքը ուղիղ դրամի պալատից է գալիս, 1947 թ. դեկտեմբերին դրամը չի փոխվելու, և մի կապուկ հին, այլևս անպետք թուղթ չէր տվել ու տարել խոզը և շռայլորեն, դարձյալ ժպտալով, իր կաշվե հին բաճկոնը չէր տվել տղայի մորն ու խաբել, թե դա կարմիր կոմիսարի բաճկոն է եղել: Ասաց. «Դա մաշվել չունի, մի քիչ յուղ քսիր՝ պսպղա»: Այդ մի կույտ փողը գյուղկոոպի խանութը վերցրեց ու տեղը մի կտոր սապոն ու մի կիլո շաքար տվեց: Բայց այդ դեպքում ի՞նչ էր հոր հագին: Հայրը, ոչ, մերկ չէր. երբ սամի կտրելու համար ձյուների միջով գնաց և երբ ձմեռանոցների վրա գլխիվարելուց առաջ արևի մեջ կանգնել էր սարի ուսին և երբ բեռան թոկերից դուրս էր եկել ու տուն էր գնում ոտի վրա քնած, մերկ չէր, հոր նիհար, լայն թիկունքին ինչ-որ շոր էր ծեփված... բանակային վերարկու չէր. հայրն ամռան օրով բանակային վերնաշապիկով վերադարձավ, ոչ հագի՛ն, ոչ գրպաններո՛ւմ բանակից ոչինչ չէր բերել – զուտ իր խոշոր ձեռներն ու բարձր ուսերը...

Երրորդ արարածն այդ գոմում կովն էր, չորրորդը՝ մոզին, հինգերորդը տղան էր: Մյուսը՝ հորթն էր մոր փորում: Տաք խավարի մեջ տղան գտավ կովի ու մոզու արանքը, ոտնաթաթերը մոզու փորի տակ խցկեց, մոզին սարսռաց, թիկունքը սեղմեց կովի էրաթաթին, ձեռքերն իր անութների մեջ առավ, և այդ ժամանակ մյուսը մոր փորում խաղաց: Մորը նա լրիվ բնակեցրել էր, մայրը լրիվ նրանն էր,

մոր մեջ նա խաղում էր, իսկ մոր կողքին կային, ջերմանում ու ապ-
րում էին տղան ու մոզին: Կովը պարանոցը ծռեց, հոտ քաշեց ու
թույլ տվեց, որ այդ այդպես լինի: